


«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂԻ
N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

# Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական, տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

Դպրոցը սկսել է իր աշխատանքները 1987 թվականի սեպտեմբերի 1-ից՝ որպես Կամոյի անվան շրջանի Բատիկյան գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց:

Դպրոցը 2011 թվականին դարձել է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և հանդիսանում է իրավահաջորդը Կամոյի անվան շրջանի Բատիկյան գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի:

Դպրոցը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Պետռեգիստրի գրանցման վկայական-03 Ա 05518 Գրանցման համար- 70.210.00876





Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ:

Տնօրեն՝ Բարսեղյան Անուշ հեռ.+374 98 79 78 11

Պաշտոնական կայք՝ gandzak2.schoolsite.am

Սոցիալական հարթակ՝ facebook.com/gandzak2 (Գանձակի երկրորդ միջնակարգ դպրոց)

Էլեկտրոնային հասցեներ՝ gandzak2@schools.am

Դպրոցն իրականացնում է հետևյալ հանրակրթական ծրագրերը՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված լիցենզիաների՝

1-ին աստիճանի՝ տարրական կրթական ծրագիր առկա ուսուցմամբ Ա 0411 145 տեղ

2-րդ աստիճանի՝ հիմնական կրթական ծրագիր առկա ուսուցմամբ Ա 0404 180 տեղ

3-րդ աստիճանի՝ միջնակարգ կրթական ծրագիր առկա ուսուցմամբ Ա 0331 115 տեղ



2023 թվականի սեպտեմբերի 1-ից դպրոցում կգործի Նախակրթարան՝ Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրով: Ծրագրի իրականացման համար համագործակցության արդյունքում 2մլն 600 հազար դրամ ներդրում է կատարել բարերարը: Սովորողների սահմանային թիվը 25 է:









Սույն զարգացման ծրագիրը կազմվել է

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N 35-Ն հրամանի հիման վրա:
2. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. N 399-Ա հրամանի պահանջների համաձայն
3. «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից / համապատասխան փոփոխությունների (2009թ., 2018թ., 2022թ.),
5. ՀՀ կրթության մասին օրենքը,
6. ՀՀ Սահմանադրությունը,
7. ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը ՀՀ կառավարության 2002 թ. N1392-Ն որոշման հավելված 3, փոփոխված 2017թ. 06.07. N801-Ն, 2021թ. 11.02. N166- Ն, 02 .02. 2023թ. N 137-Ն
8. Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին ՀՀ կառավարության 14 10.2010թ. N1391-Ն որոշման հավելված 4,փոփոխված 26.04.2018թ. N525-Ն, 16. 02. 2023 թ. N 216-Ն:
9. Դպրոցի ներքին գործունեության 2018-2019, 2019-2020, 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
10. Օրենքով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտեր

Նախորդ 5 տարիների գործունեությունը

Ղեկավարման հինգ տարիների ընթացքում դպրոցի ընդհանուր՝ ուսումնադաստիարակչական, կառավարչական, վարչատնտեսական աշխատանքները կազմակերպվել են դպրոցավարության Կարգերի, Կանոնադրության և նորմատիվ այլ իրավական ակտերի միջոցով:

Երկար տարիներ աշխատելով դպրոցում որպես ուսուցիչ և նախորդ հինգ տարիներին նաև տնօրեն՝ արժևորում եմ դպրոցում բոլորի համար բարոյահոգեբանական մթնոլորտը, մեծ ուշադրություն եմ դարձնում աշակերտների հոգեկերտությանն ու ապագա քաղաքացու կայացմանը՝ ակտիվորեն համագործակցելով ծնողական համայնքի, բարեգործների և այլ կազմակերպությունների հետ, ապահովում վերջիններիս տեղեկացվածությունն ու ներգրավվածությունն արտադասարանական, արտադպրոցական նախաձեռնություններում:

Դպրոցում մեծ տեղ եմ հատկացնում ժողովրդավարական սկզբունքներին, պահպանվում է ուսուցիչ-աշակերտ-ծնող եռակողմ համագործակցային մթնոլորտը, որի վառ ապացույցն է դպրոցում ավանդույթ դարձած տարեվերջյան հանդիսավոր նիստը, որի ժամանակ ամփոփվում են ուստարվա ընթացքում ուսումնադաստիարակչական՝ դպրոցական և արտադպրոցական միջոցառումներն ու կատարված աշխատանքները, որոնց մասին լիարժեք տեղեկատվությունները տեղադրված են ֆեյսբուքյան էջում: Հաջողություններ գրանցած և

տարբեր նախաձեռնություններում ակտիվություն ցուցաբերած ուսուցիչները, աշակերտներն ու ծնողները պարգևատրվում են:

Դպրոցում մեծ տեղ եմ հատկացնում ռազմահայրենասիրական դաստիարակությանն ու հայեցի մտածողության զարգացմանը: Խրախուսվում են հայրենասիրական միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը, որոնք միտված են հայրենասիրական ոգու բարձրացմանը, հայրենիք-դպրոց-բանակ հարաբերությունների ամրապնդմանը, հայոց պատմության էջերում տեղ գտած հերոսական անցյալի իմացությանն ու մեր օրերի «Հայրենիքի նվիրյալների» բացահայտմանը: Ավանդույթ են դարձել ամենամյա հանդիպումները երկրապահների, զինվորականների, արցախյան ազատամարտի հերոսների հետ:

Դպրոցում մեծ տեղ եմ հատկացնում նաև արտաքին համագործակցություններին, որոնց միջոցով բարելավվում է դպրոցը, նյութատեխնիկական բազան, ուսումնառությունը՝ ի շահ սովորողի:

2018-2023 ուսումնական տարիների ընթացքում կատարված աշխատանքների միջոցով գրանցած առաջընթացը

1. Նախակրթարանի բացում /վերանորոգված, առկա է անհրաժեշտ գույք, նյութեր/
2. 1-4-րդ դասարանների սովորողներին անվճար սննդի տրամադրում
3. Կազմակերպվել են համադպրոցական միջոցառումներ տարբեր թեմաներով, որից՝ «Երեխաների իրավունքները» թեմայով. միջոցառման արդյունքում շահել ենք համակարգիչ, բնապահպանական թեմայով միջոցառման արդյունքում շահել ենք դիոպրոյեկտոր, սպորտային միջոցառումների արդյունքում՝ մարզական գույք:
4. Աշխատանքային դաստիարակությանը առնչվող մի շարք միջոցառումներ. բարերարների միջոցով ձեռք է բերվել 2000 հատ ազնվամորու և հաղարջի տնկիներ: Տնկման և ընթացիկ աշխատանքները իրականացրել են աշակերտները, ծնողները և ուսուցիչները՝ դպրոցի ուսումնափորձնական հողամասում :
5. Բարերարների աջակցությամբ

- Նվեր ենք ստացել մրգատու ծառեր՝ տանձենի, խնձորենի և սալորենի՝ ինտեսիվ այգում տնկելու համար:
- Բացօթյա պատշգամբը վերանորոգվել է, ստեղծվել արցախյան հերոսամարտում զոհված Անմահ հերոսների փառքի անկյուն:
- Փոխվել են մարզադահլիճի պատուհանները և դռները, ձեռք է բերվել սպորտային գույք:
- Վերանորոգվել է դպրոցի շքամուտքը և միջանցքը, փոխվել են նաև այդ հատվածների դռները և պատուհանները:
- Բնապահպանական դաս-միջոցառման արդյունքում ստացել ենք նաև մեկ համակարգիչ և 50 հատ եղևնու տնկի, վերջիններս էլ դպրոցի ուսուցիչները, սովորողները, ծնողները տնկել են Սևան ազգային պարկում:

6. ՄԱԿ-ի պարենի համաշխարհային «Դպրոցական սնունդ» ծրագրի աջակցությամբ վերանորոգվել է դպրոցի ճաշարանը, խոհանոցը: Արդյունավետ աշխատանքները կազմակերպելու համար Դպրոցին տրվել են ճաշարանի աթոռներ, սեղաններ, լվացարան, գազօջախ, պահարաններ, ջրատաքացուցիչ, սառցախցիկ, կենցաղային սառնարան, էլեկտրական կշեռքներ, աշխատանքային սեղան, մետաղյա դարակաշար, ինչպես նաև չորացուցիչ՝ մրգերի չորացման համար, խմորհունց՝ հացահատիկային կուլտուրաներից հացաբուլկեղեն պատրաստելու համար, հացի թխման վառարան՝ դպրոցում հաց թխելու համար (հացը անվճար տրվում է 1-4-րդ դասարանների սովորողներին), մինի տրակտոր՝ բանջարաբոստանային կուլտուրայի մշակման համար, հիմնվել է ինտեսիվ մրգատու այգի:

7. Դպրոցը մասնակցել է Լոռու և Գեղարքունիքի մարզերի դպրոցների ճաշարանների բացման արարողությանը: Որպես մարզի լավագույն վերանորոգված ճաշարան՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային «Դպրոցական սնունդ» ծրագրի կողմից դպրոցը նվեր ստացավ լրացուցիչ խոհանոցային գույք:

8. Կազմակերպվել է միջոցառում՝ գերմաներեն լեզվով՝ նվիրված Գերմանիայի մշակույթին և պատմությանը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատան աշխատակիցները և փոխդեսպանը: Միջոցառումով տպավորված՝ Գերմանիայի դեսպանատան միջոցով վերանորոգվեց համակարգչային դասասենյակը, փոխվեցին դռները և պատուհանները, դպրոցին նվիրեցին 7 համակարգիչ, 7 աթոռ-սեղան, 1 լազերային տպիչ:

9. Դպրոցում անցկացվել է «Բերքի տոն», որտեղ 1-12-րդ դասարանի աշակերտները վաճառելով իրենց իսկ ձեռքով աճեցրած բերքը՝ կարտոֆիլ, գազար, բազուկ, կաղամբ, դդմիկ, դդում, ստացած գումարով դպրոցի ճաշարանի համար ձեռք բերվեց խոհանոցային պարագաներ:

10. Համադպրոցական «Ջուրը մեր կյանքում» միջոցառման շնորհիվ դպրոցը շահել է մեկ համակարգիչ:

11. Դպրոցի «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցիչների կազմակերպած՝ «Անվտանգ համացանց» թեմայով միջոցառման շնորհիվ դպրոցը ձեռք է բերել էլեկտրոնային գրատախտակ, որի շնորհիվ և՛ ինֆորմատիկայի, և՛ մյուս առարկաների դասաժամերը կազմակերպվում են արդյունավետ և բովանդակալից:

12. Աշխատանքներ են կազմակերպվել դպրոցի ուսումնափորձնական հողամասում արտադասարանական դասընթացների իրականացման համար: Սովորողները «Ֆինանսական կրթություն», «Գյուղոլորտ», «Մեզ շրջապատող դեղաբույսերը» խմբակների շնորհիվ դպրոցի հողամասում ծնողների և ուսուցիչների հետ միասին ցանում, մշակում և իրենց իսկ ձեռքով վաճառում են ստացած բերքը՝ գումարը ներդնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, ինչպես նաև իրենց դասարանների կարիքների համար:

13. Դպրոցը մասնակցել է «Վորլդ Վիժն» կազմակերպության երեխաների իրավունքների պաշտպանության միջոցառմանը և ստացել մեկ համակարգիչ և կենսաբանություն

առարկայի համար բջջային թաղանթի մոդել, ԴՆԹ-ի մոդել, լյարդի մոդել, սրտի մոդել, ծաղիկի մոդել, տերևի մոդել, մանրադիտակ:

14. Հեռավար ուսուցում կազմակերպելու համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից դպրոցը ստացել է մեկ պլանշետ և երկու փոքր համակարգիչ:

15. Մարզպետը, որպես լիազոր մարմին, դպրոցին տվել է աշակերտական աթոռներ, սեղաններ, գրատախտակ, պահարաններ, կախիչներ, ուսուցչի սեղաններ, աթոռներ:

16. Դպրոցի ուսուցիչների և աշակերտուհիների ֆուտբոլային թիմերը մասնակցել են տարբեր մրցաշարերի, այդ թվում՝ Սևանում, Դիլիջանում, Երևանում, Ստեփանավանում, Հրազդանում, Վարդենիսում, Մարտունիում: Մարտունիում հաղթել է թիմը, որի արդյունքում դպրոցը ստացել է մարզագույք, իսկ Սևանում ստացել պարգևներ և նվերներ:

17. Վոլեյբոլի թիմը մասնակցել է Աբովյանում անցկացվող մրցաշարի, որի արդյունքում դպրոցը ստացել է մարզագույք:

2023-2028 ուսումնական տարիների համար մշակված՝ դպրոցի զարգացման ծրագրի հիմքն է նախորդ հինգ տարիների ուսումնական, դաստիարակչական, ֆինանսական և ամբողջ գործունեության ձեռքբերումները, փորձը, ձևավորված արժեհամակարգը, ավանդույթները:

Դպրոցի զարգացման ծրագիրը իրականացնելու համար նախատեսվում է որոշակի ռազմավարություն, որն իր մեջ ներառում է իրատեսական, կանխատեսված ռիսկերով գործողություններ և միջոցառումներ: Շարունակականության սկզբունքով վերահսկողության և արդյունքների վերլուծության հիման վրա ԴԶԾ-ում ներկայացված է նաև նախորդ 5 տարիների գործունեության արդյունքում հաջողված ձեռքբերումները՝ շենքային, նյութատեխնիկական, ուսումնական միջավայրի բարելավման, ուսման որակի, համագործակցության, մանկավարժների և սովորողների արժևորման, խրախուսման, նրանց ներառվածության և մասնակցային որոշումների կայացման շրջանակներում, որոնք էլ ապահովել են դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի տեսանելի առաջընթացը:

Դպրոցի զարգացման ծրագրի բովանդակությունն է.

- Ապահովել է համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին
- Սահմանվել է հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները
- Վերլուծվել է իրավիճակները՝ շենքային, ուսումնադաստիարակչական, համագործակցության և այլն, բացահայտվել են ուժեղ և թույլ կողմերը,
- Գնահատվել է առկա և անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական միջոցները,
- Ներկայացվել են իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները,
- Ներկայացվել է դպրոցի զարգացման ծրագրի իրականացման գործողությունները, ժամկետները, պատասխանատուները,
- Ներկայացվել է վերահսկողության մեխանիզմները և համապատասխան վերահսկող անձիք,
- Վերլուծվել է անհրաժեշտ ռեսուրսները՝ մարդկային, նյութատեխնիկական,ՏՀՏ

- Ներկայացվել է գործողությունների  գնահատման չափանիշները:
- Ներկայացվել է  ակնկալվող արդյունքները

## Դպրոցի զարգացման ծրագրի դիրքորոշումը և տեսլականը

«Կրթությունն այնտեղ է, որտեղ պետության զարգացման և անվտանգության շահերն են»:

Դպրոցում ուսուցման և ուսումնառության, դաստիարակության գործընթացը կազմակերպել այնպես, որ նպատակուղղված լինի հավասարապես հասանելի ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Դպրոցի տեսլականը պետք է լինի ոչ միայն որպես փիլիսոփայություն, այլև՝ շարժիչ ուժ՝ դպրոցը հասցնելու այն մակարդակին, որ լինի՝

- Դպրոց բոլորի համար, որտեղ պետք է կազմակերպել ճկուն անցումային գործընթացներ, որոնց իրականացման արդյունքում դպրոցում կարող են հաջողությամբ սովորել և՛ օժտված, և՛ սովորական, և՛ ներառված երեխաները:
- Դպրոց, որտեղ երեխաները ժամանակակից կրթությանը զուգընթաց կստանան հմտություններ և ազգային, համամարդկային արժեքների վրա հիմնված այնպիսի դաստիարակություն, որոնք ոչ միայն հնարավորություն կտան դիմագրավելու արդի մարտահրավերներին,համապատասխան որոշումներ կայացնելու, գործելու, այլ նաև կերտելու ժողովրդավարական, բազմակարծիք, մասնակցային հասարակության մեջ լիիրավ քաղաքացու:
- Դպրոց, որը ոչ թե նախապատրաստում է երեխային կյանքին, այլ բերում է այն գիտակցության, որ երեխան արդեն իսկ ապրում է այսօր՝ զուգահեռ կառուցելով ապագան: 4.Դպրոց, որտեղ յուրաքանչյուրն իրեն կզգա ապահով, իրավունքները պաշտպանված, բռնություններից զերծ և ստեղծված բարենպաստ միջավայրն էլ կնպաստի յուրաքանչյուրի ինքնահաստատմանը և կգծի զարգացման իր հետագիծը:
- Դպրոց, որը յուրաքանչյուրի գիտակցության մեջ պետք է հաստատի, որ կայուն պետությունը սկսվում է հենց դպրոցից:
- Դպրոց, որը կկարողանա սովորեցնել յուրաքանչյուրին  մարդածին և բնածին արհավիրքների դեմ կայուն մնալ,  որոշումներ կայացնել և շարժվել առաջ:
- Դպրոց, որը կլինի համայնքի հետ ակտիվ համագործակցող, ինչպես նաև՝ համայնքի սոցիալ մշակութային կենտրոն:
- Դպրոց, որտեղ յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ինքն է զինվորը, հրամանատարը, վարչապետն իր երկրի և ինքն է պատասխանատուն երկրի զարգացման, անվտանգության, ինչպես նաև անհաջողությունների համար:

## Դպրոցի գործունեությունը

### Առարկան

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

### Նպատակները

1. Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

2. Մանկավարժական համակազմի մասնագիտական գիտելիքների և հմտությունների, մանկավարժության տեսության և պրակտիկայի արդի զարգացումների, այդ թվում՝ մանկավարժության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ներառականության, հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի իմացության, ուսումնական, բովանդակային և մեթոդիկայի հիմնախնդիրների լուծման կարողությունների ապահովում:

3. Դպրոցի ուսումնական միջավայրի բարելավում, տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների, ուսումնական և նյութատեխնիկական բազայի շարունակական նորարացում:

4. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի առաջանցիկ և կայուն բարձրացման ապահովում:

5.Արտադասարանական և արտադպրոցական համագործակցության խթանում, ընդլայնում:

6. Դպրոցի գործընթացի կառավարման, վարչարարության, գործավարական գործիքների ապահովում:

### Նպատակներից բխող խնդիրները

1.Սովորողների անհատական կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցություն, ուսումնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման

ապահովում, ըստ չափորոշչի՝ ութ կարողունակությունների, հիմնական ծրագրերի բովանդակության չորս բաղադրիչների ձեռք բերում և ձևավորում, ինչպես նաև նախասիրությունների և կրթական պահանջների բավարարում:

2. Մանկավարժական համակազմի հետ տարվող աշխատանքների ընդլայնում բոլոր ուղղություններով՝ ատեստավորում, դասընթացներ, գործնական աշխատանքներ՝ դպրոցի և հրավիրված մասնագետների միջոցով:

3. Նորարարությունների, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական, ենթակառուցվածքների ստեղծում, շարունակական նորացում և համալրում:

4. Դպրոցում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքների, արտակարգ ընդունակություններ կամ ցածր առաջադիմություն ունեցողների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացած երեխաների համար կազմակերպել, իրականացնել լրացուցիչ հանրակրթական ծրագրեր, անհատական պարապմունքներ և ըստ նախասիրությունների՝ արտադասարանական խմբակներ, որոնք կնպաստեն ուսման որակի բարձրացմանը:

5. Աշակերտական, մանկավարժական համակազմի, կառավարման և խորհրդակցական խորհուրդների, համայնքի, կրթության կառավարման լիազորված և շահառու մարմինների, բարեգործների հետ համագործակցության խթանում, ընդլայնում:

6. Օրենքով սահմանված նորմատիվ, ներքին իրավական ակտերի վարման, կիրառման թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում:

## Սովորողների կրթական կարիքները

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի /Հանրակրթության մասին օրենք.հոդված 5/

1. մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը

2. մարդկային արժանապատվության պահպանմանը

3. իր ընդունակություններին, կարողություններին և առողջության համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը

4. ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը

5. մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը

6. ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը

7. որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան

Կրթություն, որը մեզ պետք է

(Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիր)

Ներկայումս Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ըստ այդմ այն պետք է բավարարի և՛ յուրաքանչյուրին, և՛ ողջ հասարակությանն ու պետությանը:

Կրթության զարգացման տեսլականը

1. Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է: Պետությունը պետք է ապահովի համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Հասարակությունը կիսում է կրթության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատվությունը, որը ենթադրում է ներառական հանրային գործընթաց: Քաղաքացիական հասարակությունը, ուսուցիչներն ու դասախոսները, մասնավոր հատվածը, համայնքը, ընտանիքը, երիտասարդներն ու երեխաները կարևոր դեր ունեն որակյալ կրթության իրավունքի իրացման գործում: Պետության դերը վճռորոշ է կարգավորող սկզբունքների և նորմերի սահմանման համար:
2. Կրթությունը հանրային արժեք է: Այն պետք է նպատակաուղղված լինի տվյալ քաղաքակրթական տեսակի լինելիության ապահովմանը, ձևավորի ազատ և պատասխանատու քաղաքացի: Կրթության միջոցով տեղի է ունենում մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված աշխարհընկալման ձևավորումը: Կրթությունը սերունդների հոգևոր-մշակութային ժառանգության, քաղաքակրթական արժեքների պահպանման և փոխանցման, ինչպես նաև նոր արժեքների ստեղծման պատասխանատվություն դաստիարակող հիմնական համակարգն է:
3. Կրթության զարգացման գլխավոր նպատակն է ապազգային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.
   1) լիարժեք ծառայում է ազգային շահերին,
   2) արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին,
   3) յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

Հայաստանի Հանրապետության Հանրակրթության մասին օրենքում ամրագրված է՝
/Հանրակրթության մասին օրենք, հոդված 4/

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Ինչպես նաև համընդհանուր ներառական կրթությունը հռչակված է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք և նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը, ինչպես նաև համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան ՝պարտադիր միջնակարգ անվճար կրթություն:

Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

Դպրոցի զարգացման ծրագրի հիմքի հանրակրթության գործընթացը կազմակերպելիս, ըստ իս, հարկավոր է կրթությունն իրականացնել ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ՝

1. Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, ծառայի անհատին և ժողովրդին:
2. Հանրակրթությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով, որը նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության և միասնության ապահովմանը:
3. Հանրակրթությունն իրականացնել ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով դրա աշխարհիկ բնույթը՝ զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
4. Ապահովել «ՀՀ կրթության մասին օրենքով հիմնական կրթության հասանելիությունը յուրաքանչյուր անձի համար, անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:
5. Հանրակրթությունը դպրոցում իրականացնել սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

## Դպրոցի ենթակառուցվածքների համապատասխանությունը սովորողների կրթական կարիքների ապահովման, ուսումնական գործընթացի կազմակերպման, մարդկային ռեսուրսներին եվ ներուժին

Դպրոցը որպես մեկ ամբողջություն ներկայանում է իր ենթակառուցվածքներով, նյութատեխնիկական, մարդկային ռեսուրսներով, ֆինասական միջոցներով և կրթական ծրագրերով:

ՌԻստի սովորողների կրթական կարիքների ապահովման, ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսման որակի բարձրացման, ինչպես նաև մանկավարժների և, ընդհանրապես, դպրոցի ընդհանուր գործունեության արդյունավետության կարևոր պայմաններից է ենթակառուցվածքները, որոնք նպաստում են սովորողների՝ ուսման նկատմամբ մոտիվացիային: Ենթակառուցվածքները ԴԶԾ-ում գտնվում են առաջնային տեղում և նախորդ, ինչպես նաև առաջիկա հինգ տարիների ընթացքում պարբերաբար կազմակերպել և շարունակելու եմ աշխատանքները եղածը նորոգելու, վերազինելու, ինչպես նաև նորը ստեղծելու համար:

Դպրոցում գործում են

- Նախակրթարան – հիմնանորոգված է, ապահոված է համապատասխան գույքով /երկու դաստիարակ, մեկը հիմնական, մյուսը՝ փոխարինող/,
- Ֆիզիկայի երկրորդ դասասենյակ, որը վերջերս ամբողջությամբ վերանորոգվել, վերազինվել և անվանակոչվել է արցախյան հերոս, սպա Տարոն Սարգսյանի անունով / մեկ ուսուցիչ /:
- Ֆիզիկայի երկրորդ լաբորատորիա - վերանորոգման և վերազինման կարիք ունի
- Քիմիայի լաբորատորիա - վերանորոգման և վերազինման կարիք ունի / մեկ ուսուցիչ /:
- Կենսաբանության կաբինետ - վերանորոգման կարիք ունի և վերազինվել է «Վորլդ Վիժն»-ի կողմից համապատասխան ուսումնական նյութերով և պարագաներով / մեկ ուսուցիչ /:
- ՆԶՊ կաբինետ – ամբողջությամբ վերանորոգված է, ապահոված է առարկայական նյութերով,պարագաներով, ջեռուցվում է արևային ՖՎ կայանի միջոցով: Կաբինետը անվանակոչված է դպրոցի շրջանավարտ, արցախյան հերոս Գուրգեն Այվազյանի անունով / մեկ ուսուցիչ /:
- Զենքի պահեստ – Բարվոք վիճակի է
- Ինֆորմատիկայի կաբինետ – ամբողջությամբ վերանորոգված է, տեղադրված է 11 նոթբուք (կա նաև համալրման կարիք), էլեկտրոնային գրատախտակ, պրոեկտոր, վերանզինվել է Գերմանիայի դեսպանատան կողմից / երկու ուսուցիչ /:
- Երաժշտության կաբինետ – վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են, գործում է գերմաներեն լեզվով երգչախումբ, առկա են երաժշտական գործիքներ, հալարվելու է նոր երաժշտական գործիքներով՝ Գերմանիայի դեսպանատան կողմից / մեկ ուսուցիչ /:
- Շախմատի կաբինետ – մասամբ վերանորոգված է, առկա են սեղաններ, աթոռներ, շախմատներ, շախմատի պատի մեծ տախտակ և պարագաներ / մեկ ուսուցիչ /:
- Ռեսուրս դասարան – մասամբ վերանորոգված է, առկա են ԿԱՊԿՈՒ սովորողների համար համապատասխան գույք և ուսումնական պարագաներ /մեկ հոգեբան/:
- Տեխնոլոգիայի կաբինետներ - վերանորոգման և վերազինման կարիք ունի /երկու ուսուցիչ/:
- Արհեստանոցներ /փայտամշակման և մետաղաշինական/ - վերանորոգման և վերազինման կարիք ունի:
- Հանդիսությունների դահլիճ – մասսամբ վերանորոգված է, որտեղ կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ:
- Սպորտդահլիճ –վերանորոգված է բարերարի ներդրման միջոցով, առկա է սպորտ գույք, կջեռուցվի արևային ՖՎ կայանի միջոցով / մեկ ուսուցիչ /:
- Մինի խաղահրապարակ – բավարար վիճակի է, ՀՖՖ-ի հետ պայմանավորվածության արդյունքում 1 տարվա ընթացքում պետք է սարքվի արհեստական խոտածածկով ֆուտբոլային դաշտ:

- Սպորտային մինի հրապարակ – բարվոք վիճակում է, առկա է բասկետբոլի, վալեյբոլի խաղերի համար անհրաժեշտ պարագաներ:
- Բուժկետ – վերանորոգված է և ապահոված է համապատասխան առաջին օգնության անրաժեշտ բժշկական սարքերով և դեղորայքով / մեկ բուժքույր /:
- Գրադարան - մասամբ վերանորոգված է, առկա են գեղարվեստական գրքեր, որը համալրվել է բարերարի կողմից, մոտ 400 միավոր գեղարվեստական գիրք, առկա է նաև առարկայական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, սովորողների թվին համապատասխան դասագրքեր / մեկ գրադարանավար /:
- Դասասենյակներ – մասամբ վերանորոգված են, առկա է բավարար թվով աշակերտական սեղաններ-աթոռներ, այս պահին որպես գործող դասասենյակներ՝ 12-ն են:
- Ապաստարան / նկուղ / - Հիմնանորոգման ընթացքի մեջ է և բացի նկուղային հատվածից, դառնալու է և որպես ապաստարան, և որպես հրաձգարան՝ համապատասխան չափանիշներին:
- Միջանցքներ – վերանորոգված են:
- Ճաշարան – ամբողջությամբ հիմնանորոգված է, ապահոված համապատասխան սարքավորումներով, սպասքով: 1-ից 4 դասարանների սովորողներին տրվում է անվճար տաք սնունդ /:
- Մրգերի չորանոց – գործում է, բարվոք վիճակ է:
- Ինտեսիվ այգի – գործում է, բարվող վիճակի է:
- Հատապտուղների /մորի, հաղարջի/ այգի - գործում է, բարվող վիճակի է:
- Բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման այգի - գործում է, բարվող վիճակի է:
- Աշխատասենյակներ – առկա է ուսուցչանոց (բարվոք վիճակ), տնօրենի (բարվոք վիճակ), ԴԱԿ-ի, հաշվապահի, ԱԽ-ի (մասամբ վերանորոգված) աշխատասենյակներ
- Պահակակետ - բարվոք վիճակի է /4 պահակ/

| | |
|---|---|
| ջրամատակարարում | շուրջօրյա - բավարար |
| կոյուղացում | կենտրոնացված -բավարար |
| էլեկտրամատակարարում | շուրջօրյա - բավարար |
| գազամատակարարում | ջեռուցման սեզոնին - բավարար |
| ջեռուցում | լոկալ, բավարար |
| ինտերնետ կապ | անհատական կրիչի, Wi-Fi-ի, մալուխների միջոցով - բավարար |
| Տեսախցիկներ | բավարար |
| Արևային ֆոտովոլտային կայան | բավարար |
| Կապի միջոց | - |

Մարդկային ռեսուրսներ

| | |
|---|---|
| Տնօրեն | 1 |
| Ուսումնական գծով փոխտնօրեն | 1 |
| ՄԿԱ գծով փոխտնօրեն | - |
| ԴԱԿ | 1 |
| Ուսուցիչներ | 25 |
| Հաշվապահ | 1 |
| Դպրոցի խորհրդի անդամներ | 9 |
| Մանկավարժական խորրդի անդամներ | 32 |
| Աշակերտական խորհրդի անդամներ | 14 |
| Աշխատողների ընդհանուր թիվ | 36 |
| Աշակերտներ | 206 |

Վերը նշված լաբորատորիաներում, կաբինետներում, սպորտդահլիճում դասավանդում են համապատասխան առարկայական ուսուցիչներ, այսինքն մարդկային ռեսուրսները համապատասխանում են ենթակառուցվածքներում ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

Մեր երկրին պատուհասած պատերազմներն ու համավարակը էականորեն վատթարացրին երկրի ֆինանսատնտեսական վիճակը, որն էլ ուղղակիորեն անդրադարձել է նաև կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումն ապահովող ֆինանսավորման վրա: Ելնելով ստեղծված իրավիճակից, սույն զարգացման Ծրագիրը (նպատակները և խնդիրները) մշակվել է այնպես, որ դրա իրականացումը իրատեսական լինի, որի կարևոր և անհրաժեշտ պայմաններն էլ իրավիճակների հստակ գնահատումն և վերլուծությունն են, որոնց համար պետք է առանձնացնել դպրոցի ՈՒԺԵՂ /նպաստող/ և ԹՈՒՅԼ /զարգացման ենթակա/ կողմերը:

Իրավիճակի վերլուծությունը.ուժեղ և թույլ կողմերը.

Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը

Դպրոցը տիպային եռահարկ կառույց է /մասամբ վերանորոգված/ ունի երեք մասնաշենք ընդհանուր 24 000 մ$^2$ : Նախագծային հզորությունը՝ 1176 աշակերտ

Դպրոցը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը:

- Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:

- Դպրոցի տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուց բավարար հեռավորության վրա:
- Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենքին:
- Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են և դուրս են բերվում հաստատության տարածքից:
- Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների դեմ:
- Դպրոցը գազաֆիկացված է:
- Դպրոցում պահպանված են սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ:
- Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին:
- Դպրոցում առկա է սովորողների ու անձնակազմի համար մշակված տարհանման պլան, որի պլան-սխեմաները փակցված են նախասրահում, բոլոր հարկերում, կաբինետներում,աշխատասենյակներում,հանդիսությունների, սպորտ դահլիճներում, դասասենյակներում և դպրոցի շենքի անհարաժեշտ բոլոր վայրերում: Բոլոր տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն:
- Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող երեք պահուստային և երեք հիմնական ելքեր:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ✓ Նախակրթարան 145 մ$^2$<br>✓ Ջեռուցման համակարգ<br>✓ Ինտեսիվ այգի 2500 մ$^2$<br>✓ Հատապտուղների/մորի, հաղարջի այգի 400 մ$^2$<br>✓ Բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման այգի 50 մ$^2$<br>✓ Մինի խաղահրապարակ 350 մ$^2$<br>✓ Մրգերի չորանոց 63 մ$^2$ Ինֆորմատիկայի մեկ կաբինետ 54մ$^2$<br>✓ Ճաշարան 324 մ$^2$<br>✓ ՆԶՊ կաբինետ 54 մ$^2$<br>✓ Զենքի պահեստ 12 մ$^2$<br>✓ Ռեսուրս դասարան 26 մ$^2$<br>✓ Ֆիզիկայի լաբորատորիա 72 մ$^2$<br>✓ Բուժկետ -12 մ$^2$<br>✓ Դասասենյակներ ստանդարտ 15 հատ<br>✓ Շախմատի կաբինետ 54 մ$^2$<br>✓ Սպորտային մինի հրապարակ 60 մ$^2$<br>✓ Սանհանգույց 1<br>✓ Նկուղ-Ապաստարան 360 մ$^2$<br>✓ Թեքահարթակ 2 մ$^2$<br>✓ Գլխավոր շքամուտք<br>✓ Միջանցքներ<br>✓ Տանիք<br>✓ Արևային ֆոտովոլտային կայան | • Գրադարան-ընթերցասրահ 72 մ$^2$<br>• Սպորտային դահլիճ 325 մ$^2$<br>• Միջոցառումների հանդիսությունների դահլիճ 360 մ$^2$<br>• Մասնագիտացված ուսումնական արհեստանոց - փայտամշակման - 72 մ$^2$, մետաղամշակման- 72 մ$^2$<br>• Քիմիայի լաբորատորիա 72 մ$^2$ Կենսաբանության կաբինետ 72 մ$^2$<br>• Տեխնիկական նշանակության սենյակ 54 մ$^2$<br>• Դասասենյակներ ստանդարտ 8 հատ 432 մ$^2$<br>• Տեխնոլոգիայի կաբինետներ 54 մ$^2$<br>• Սանհանգույց 9 հատ 81 մ$^2$<br>• Հրաձգարան 25 մ$^2$ |

## Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Դպրոցի նյութատեխնիկական բազան, որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, ստեղծագերծական գործունեության և կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվել և զարգացվում է բյուջետային, ինչպես նաև սեփական, համագործակցության և բարեգործության միջոցներով: Ուսումնական հաստատության ուսումնանյութական բազան նյութական և տեխնիկական միջոցների համալիրն է, որը նախատեսված է պետական կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և պլանավորումների համապատասխան սովորողների պատրաստման ապահովմանը:

Ուսումնանյութական բազայի հիմնական տարրերն են

- ուսումնալաբորատոր բազան՝ մասնագիտացված դասարաններով, կաբինետներով, լաբորատորիաներով, ուսումնաարտադրական արհեստանոցներով, ուսումնական գրադարան-ընթերցասրահով, ինչպես նաև տեղեկատվական և տեխնոլոգիաների միջոցներով, լաբորատոր սարքերով, ուսուցման և վերահսկողության տեխնիկական միջոցներով, այլ սարքավորումներով և դիդակտիկ նյութերով զինված այլ ուսումնական և ուսումնաօժանդակ շինություններով շենք (մասնաշենք) է,
- մարզական բազան դպրոցամերձ մարզական տարածքն է, ինչպես նաև մարզահամալիրները և սարքավորումները,
- նախնական զինվորական պատրաստության բազան հրաձգարանն է, այլ օբյեկտներ՝ սարքավորված և զինված պահանջներին համապատասխան,
- տեղեկատվության ապահովման միջոցներ՝ դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսումնամեթոդական, գիտական և տեղեկատվական գրականություն, դպրոցի կանոնադրությունը, ղեկավարության հրամանները, մանկխորհի և աշխատակազմի խորհրդակցությունների որոշումները, այլ նորմատիվ փաստաթղթեր, համակարգչային ծրագրեր, համացանց, էլեկտրոնային փոստ, կինո և այլ տեսանյութերի ցուցադրություն, դիդակտիկ նյութեր և այլն:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Համակարգիչներ 11հատ<br>✓ Տեսաէկրան 2 հատ<br>✓ Դիոպրոեկտոր 2 հատ<br>✓ Ինտերնետային կապ<br>✓ Ճաշարանի գույք<br>✓ ՆԶՊ ուսուցման անհրաժեշտ նյութեր<br>✓ Գեղարվեստական և ուսումնական գրականություն<br>✓ Ֆիզիկայի փորձաուսումնական սարքեր,նյութեր<br>✓ Սպորտային գույք<br>✓ Նախակրթարանին անհրաժեշտ գույք,պարագաներ<br>✓ Հակահրդեհային գործիքներ<br>✓ Առաջին օգնության բժշկական պարագաներ,դեղորայք<br>✓ Չիր պատրաստելու սարք 1 հատ<br>✓ Մինի տրակտոր 1 հատ<br>✓ Գյուղտնտեսության գործիքներ<br>✓ Լազերային տպիչ սարք 1 հատ<br>✓ Ալրահունց սարք 1 հատ<br>✓ Կենսաբանության դիդակտիկ պարագաներ<br>✓ Էլեկտրոնային գրատախտակ 2 հատ | • Ներառական կրթություն կազմակերպելու համար դիդակտիկ սարքեր,նյութեր<br>• Փայտամշակման,մետաղամշակման դետալներ<br>• Քիմիայի փորձաուսումնական սարքեր,նյութեր |

## Հաստատության տնօրենի և կառավարման մարմնի համագործակցության վերլուծությունը

Դպրոցի կառավարման մարմիններն են՝

1. Հիմնադիրը
2. ԿԳՄՍ նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը /այսուհետ՝ լիազորված մարմին/
3. Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը
4. Գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը /այսուհետ համակարգող/:

Դպրոցն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ , որը ձևավորվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած կարգով: Խորհրդի անհատական կազմը հաստատում է լիազորված մարմինը: Կարգի համաձայն՝ ԿԽ-ը կազմված է 9 անդամից:




Կառավարման խորհուրդը

- Հաստատում է իր աշխատակարգը
- Դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա իր կողմից մշակված՝ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը
- իր կազմից  փակ քվեարկությամբ ընտրում է նախագահ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նախկին Կարգով ընտրում է տնօրեն:

Տնօրենի ներկայացմամբ քննարկում և հավանություն է տալիս

- ամենամյա ծախսեր նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, տալիս է հավանություն և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնին:
- ֆինանսատնտեսական ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները
- մասնակցում է դպրոցի ներքին գնահատմանը և քննարկում արտաքին գնահատումը
- Կառավարման խորհուրդը սահմանում է հիմնադրի սահմանած կարգով դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները
- լսում է գույքի օտարման և/կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների առաջարկությունները
- Իրականացնում է նաև օրենքով սահմանված կարգով հիմնադրի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ
- ԴԶԾ-ում ներկայացված բոլոր կատարված աշխատանքները Կառավարման խորհրդի

կողմից քննարկվել, հավանություն են ստացել և որի իրականացումից հետո ներկայացվել է հաշվետվությունների՝ կատարողականության մասով:

- Լսում և քննարկում է տնօրենի կողմից պարբերաբար ներկայացվող դպրոցի զարգացման ծրագրի կատարողականությունը:

Բոլոր նիստերի օրակարգային հարցերի քննարկումների ժամանակ իրականացվել են մասնակցային քննարկումներ և կայացվել որոշումներ: Անհրաժեշտության դեպքում նիստերն իրականացվել են հեռավար ձևաչափով:

ՀՀ Կառավարության սահմանած կարգով ԿԽ-ն ընտրում է տնօրեն:
Կառավարման խորհուրդը վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը, տնօրենի գործունեությունը:

Որպես տնօրեն, բոլոր նիստերին մասնակցել եմ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Հինգ տարիների ընթացքում ուսումնական հաստատության կանոնադրության համաձայն նիստերը գումարվել են՝

| 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 5 հերթական | 5 հերթական | 7 հերթական | 5 հերթական<br>1 արտահերթ | 5 հերթական<br>2 արտահերթ |

Կառավարման նոր համակարգի համաձայն՝ Կառավարման խորհուրդը աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| Տնօրենը՝<br>✓ Խորհրդի հավանությանն և քննարկման է ներկայացնում ուսումնադաստիարակչական գործունեության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը, ներքին և արտաքին գնահատման հաշվետվությունները,<br>✓ Առնվազն երկու անգամ ներկայացնում է զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունները: Խորհրդի կողմից տրվում է եզրակացություն:<br>✓ Հաստատման է ներկայացնում՝ դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, կարգի համաձայն տնօրենի կողմից մշակված՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը:<br>✓ Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում խորհրդի նիստերին:<br>✓ Ապահովում խորհրդի իրավական հիմք ունեցող որշումները:<br>✓ Անհրաժեշտության դեպքում՝ նիստերի հեռավար անցկացում | Խորհրդի կողմից՝<br>• Զարգացման ծրագրի կատարման աջակցության, նախաձեռնողականության պասիվություն<br>• Խորհրդի անդամի հաճախակի բացակայություն |

## Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի հիմնախնդիրների լուծման կարևոր և նպաստող գործոնն է դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ, որը և՛ նախորդ, և՛ հաջորդ 5 տարիների ԴԶԾ-ի իրականացման պահանջն է:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Տեղական ինքնակառավարման մարմին<br>✓ Սոցիալապես անապահով երեխաների՝ տարբեր ծրագրերի մեջ ընդգրկում<br>✓ ՈՒսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու շրջանակներում (սպորտլանդիա, առարկայական մրցույթներ օլիմպիադաներ, միջոցառումներ)<br>✓ Հանձնարարականների, որոշումների,նորմատիվ իրավական ակտերի՝ ժամկետներում կատարողականության ապահովում<br>✓ Համայնք—Ծնողական համայնք/շահառու/ Դպրոցը որպես մշակութային, սպորտային, ինչպես նաև քաղաքացիների և սովորողների նախասիրությունների և հետաքրքրությունների բավարարման կենտրոն<br>✓ Ներգրավածություն արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներին<br>✓ Կրթության կառավարման մարմին<br>✓ Բարերարներ—Նպատակային ներդրումներ | • Շահառու կազմակերպություններ<br>• Ծնողների կողմից ինքնուրույն նախաձեռնություն |

| | |
|---|---|
| ✓ ՄԱԿ ի գրասենյակ–Դպրոցի կողմից ծրագրի իրականացնում<br>✓ Գերմանիայի դեսպանատուն--Դպրոցի կողմից ծրագրի իրականացնում<br>✓ Գավառի մանկատուն—Դպրոցի կողմից գեղագիտական միջոցառումների կազմակերպում<br>✓ Քոլեջ—Մասնագիտական կողմնորոշման ուսումնասիրություն<br>✓ ԿԶՆԱԿ—Կրթական պահանջների ապահովում<br>✓ Գավառի պետական համալսարան<br>✓ Գավառի երաժշտական ուսումնարան<br>✓ Գավառի սպորտ դպրոց<br>✓ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա<br>✓ Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա | |

## Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում

«Ուսուցիչը, ժամանակի ընթացքում անընդհատ գտնվելով շարժման մեջ, պետք է դառնա վերափոխման առաջնորդ»

Դպրոցում աշխատում է 30 մանկավարժ, 22 ուսուցիչ, այդ թվում՝ 2 ուսուցչի օգնական, համատեղությամբ աշխատող 1 ուսուցիչ. բոլորն ունեն բարձրագույն կրթություն:

Մանկավարժը սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և/կամ կրթության բովանդակության պահանջները ապահովողն է:

Դպրոցի մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Աշխատում են նաև երիտասարդ, խոստումնալից, իրենց գործում բավական արհեստավարժ երիտասարդ մասնագետներ:
Դպրոցում ձևավորված բարի ավանդույթի համաձայն՝ մասնագիտական մեծ փորձ ունեցող ուսուցիչների միջոցով կազմակերպվում են փորձի փոխանակում, վարպետության դասեր, մասնագիտական կարողությունների գնահատում, վերլուծում և առաջարկությունների ներկայացում, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն բարելավվելու ուսման որակները, այլ նաև հրաշալի առիթ է փոխհամագործակցության շրջանակներում համակազմի շփման մթնոլորտը էլ ավելի ամրապնդելու: Ուսուցիչները բարեխղճորեն իրականացնում են իրենց

առաքելությունը և նրանց չի խանգարել անգամ 2020 թվականի կորոնավիրուսի համավարակը, երբ ամբողջ համակարգը անցավ նոր դասավանդման ձևին, որը չնայած բավական խնդիրներ և դժվարություններ առաջացրեց, բայց և այնպես, ուսուցիչները, տիրապետելով ՏՀՏ և հաղորդակցական անհրաժեշտ տեխնոլոգիաների կիրառությունը, կարողացան ոչ միայն ապահովել շարունակականությունը ուսման, այլ նաև առիթ էր դասավանդման նոր ձևի և ժամանակակից տեխնոլոգիաների տիրապետմանը:

Ուսուցիչների մասնագիտական որակների և դասավանդման կարողունակությունների, հմտությունների զարգացման կարևոր տեղում է գտնվում վերապատրաստումների գործընթացը: Բոլոր ուսուցիչները պատրաստակամ մասնակցում են վերապատրաստումներին, սեմինարների, ինչպես առկա, այնպես էլ հեռավար ձևաչափով կրթական տարբեր հարթակներում, և ամենակարևորը, վերապատրաստումներից հետո իրենց ձեռք բերած գիտելիքները և կարողունակությունները «բերում» են դպրոց մեթոդմիավորումների, մանկավարժական խորհուրդի նիստերի ժամանակ կազմակերպող քննարկումներում ստանում և ներկայացնում առաջարկություններ, մշակում դասավանդման նոր մեթոդներ, որից հետո ոչ միայն իրենք, այլ նաև մյուս ուսուցիչները, ըստ ցանկության, կիրառում դասապրոցեսների ընթացքում:

Վերապատրաստումներ իրականացնելու համար հրավիրվում են մասնագետներ, կազմակերպվում քննարկումներ և բաց դասերի:

Դպրոցում կարևորվում է ոչ միայն առարկայական, այլ նաև ժամանակակից տեխնոլոգիաները, ՏՀՏ-ները կիրառելու կարողությունների վերապատրաստումներին մասնակցելը:

Ուսուցիչները իրենց դասապրոցեսները անցկացնում են նաև ինտերակտիվ ձևաչափով, դրանով իսկ հնարավորություն տալով սովորողներին մասնակցային գործընթացի:

Դպրոցում կարևորվում է նաև նորարարությունների ներդրումը ուսումնական գործընթացում, քանի որ մոտիվացնում է սովորողներին ուսումնառության ընթացքում:
Դպրոցում աշխատող ուսուցիչներին կարելի է բաժանել մի քանի խմբերի: Առաջին խումբը մեծ ոգևորությամբ և պատրաստակամ կերպով ընդունում է նորարարությունը, մշակում և կիրառում: Երկրորդ խմբի ուսուցիչները ուսումնասիրում են առաջին խմբի ուսուցիչների կատարած աշխատանքը, որից հետո նախաձեռնում են նորարարությունը: Երրորդ խմբի ուսուցիչներին ավելի երկար ժամանակ է պահանջվում դիտարկելու, ուսումնասիրելու նորարարությունը և միայն այլ ուսուցիչների օգնությամբ են կարողանում ներդնել նորարարություն: Չորրորդ խմբի ուսուցիչները ունեն կարծրատիպեր նորարարության նկատմամբ, քանի որ ունեն վստահության պակաս: Չնայած նման դրսևորմանը, սակայն դպրոցում ինչպես իմ, այնպես էլ համապատասխան մեթոդմիավորումների կողմից կատարվում են աշխատանքներ՝ ներգրավելով նրանց:

Դպրոցի բոլոր ուսուցիչները պարբերաբար մասնակցում են Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված փոփոխությունների վերապատրաստումներին:

Առարկայական ուսուցիչները իրենց դասերը կազմակերպում են համապատասխան լաբորատորիաներում, կաբինետներում, ինչպես նաև ինֆորմատիկայի կաբինետում՝ կիրառելով սարքավորումներ, ՏՀՏ-ներ, էլեկտրոնային գրատախտակը, ուսումնական նյութերը, որի միջոցով էլ ավելի է հնարավոր լինում մատչելի և բարձր որակով դարձնել սովորողին տրվող գիտելիքները:

Ուսուցիչների հետևողական աշխատանքների շնորհիվ սովորողները պատրաստակամ մասնակցում են առարկայական օլիմպիադաներին, մրցույթներին՝ «Կենգուրու», «Մեղու» և այլն:


100%
90%
80%
70%
60%
50%
40%
30%
20%
10%
0%
2
8
44
36
Category 1
I ԽՈՒՄԲ
II ԽՈՒՄԲ
III ԽՈՒՄԲ
IV ԽՈՒՄԲ


Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝
ըստ ուստարիների
16,7
15,7
15,3
15,3
14,37
2018-2019
2019-2020
2020-2021
2021-2022
2022-2023




Ուսուցչական անձնակազմը ըստ աշխատանքային ստաժի

| 1 | Ուսուցիչների ազգանուն,անուն | ստաժ |
|---|---|---|
| 2 | Սողոյան Ռուզաննա | 44 |
| 3 | Մարտոյան Համեստ | 35 |
| 4 | Պողոսյան Աննա | 34 |
| 5 | Վարդանյան Արփիկ | 34 |
| 6 | Բարսեղյան Անուշ | 32 |
| 7 | Հակոբյան Մարգարիտ | 32 |
| 8 | Հովհաննիսյան Մարգարիտ | 32 |
| 9 | Մակարյան Կարինե | 30 |
| 10 | Պետրոսյան Գոհար | 30 |
| 11 | Դանիելյան Անժելա | 22 |
| 12 | Ասատրյան Տիգրան | 19 |
| 13 | Ստեփանյան Արմինե | 19 |
| 14 | Ստեփանյան Հեղինե | 14 |
| 15 | Գյուրջյան Սրբուհի | 10 |
| 16 | Գյուրջյան Սրբուհի | 10 |
| 17 | Հակոբյան Թեհմինե | 9 |
| 18 | Գևորգյան Թերեզա | 8 |
| 19 | Կիրակոսյան Լիանա | 5 |
| 20 | Վարդանյան Լիանա | 5 |
| 21 | Բարսեղյան Սոֆյա | 3 |
| 22 | Օհանյան Շողեր (ուս.օգնական ) | 3 |
| 23 | Մովսեսյան Գոհար | 3 |
| 24 | Ասատրյան Արտակ | 3 |
| 25 | Զրադացպանյան Լաուրա(գրադարանավար ) | 3 |
| 26 | Խաչատրյան Սերինե | 2 |
| 27 | Սարգսյան Սիրուն | 2 |
| 28 | Սահակյան Ծաղիկ (ուս. օգնական ) | 2 |
| 29 | Մարգարյան Արաքս | 1 |
| 30 | Յավրյան Լիլիթ | 1 |

Ուսուցիչները մասնակցում են հերթական ատեստավորման պարտադիր վերապատրաստմանը ատեստավորման ժամանակացույցին համապատասխան՝ հաստատված տնօրենի կողմից:

| Ուսուցչի անուն, ազգանուն | Թվականը | Անցկացման վայրը |
|---|---|---|
| Բարսեղյան Անուշ | 2022թ | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Հակոբյան Մարգարիտ | 2022թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Հովհաննիսյան Մարգարիտ | 2022թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Վարդանյան Արփիկ | 2021թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Պետրոսյան Գոհար | 2021թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Վարդանյան Լիանա | 2022թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Բարսեղյան Սոֆյա | 2022թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Հակոբյան Թեհմինե | 2022թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Ստեփանյան Հեղինե | 2021թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Դանիելյան Անժելա | 2018թ., 2023թ | Կրթության ազգային ինստիտուտ ՓԲԸ, «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Մակարյան Կարինե | 2018թ.,2023թ. | Կրթության ազգային ինստիտուտ ՓԲԸ, «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Ասատրյան Տիգրան | 2018թ.2023թ. | Կրթության ազգային ինստիտուտ ՓԲԸ, «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Մարտոյան Համեստ | 2018թ.2023թ. | Կրթության ազգային ինստիտուտ ՓԲԸ, «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Պողոսյան Աննա | 2023թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |

| | | |
|---|---|---|
| Սողոյան Ռուզաննա | 2023թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Սարգսյան Սիրուն | 2023թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Ասատրյան Արտակ | 2023թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Գևորգյան Էմմա | 2021թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Դանիելյան Մարիամ | 2021թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |
| Խաչատրյան Շողիկ | 2022թ. | «Գավառի ավագ դպրոց» ՊՈԱԿ |

Դպրոցում գործող աշխատակարգի համաձայն՝

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Ուսուցիչները պետք է ունենան /ունեն/ աշխատանքային փաթեթ, որը պարունակում է ըստ պաշտոնական նկարագրի նրանց պարտականությունները և իրավունքները, թեմատիկ պլանը, բաց դաս, միջոցառում կազմակերպելու, ատեստավորման, վերապատրաստման, տարաբնույթ դասընթացների մասնակցության ժամանակացույցը, դասի օրվա պլան<br>✓ Դասղեկների աշխատանքային փաթեթ, որը պարունակում է ըստ պաշտոնական նկարագրի նրանց պարտականությունները և իրավունքները, դասղեկի աշխատանքային տարեկան պլան, դասղեկի ժամի արձանագրությունների մատյան, ծնողական ժողովների արձանագրությունների մատյան<br>✓ Հոգեբանի աշխատանքային փաթեթ<br>✓ Գրադարանավարի աշխատանքային փաթեթ<br>✓ ՄՄ նախագահների աշխատանքային փաթեթ<br>✓ Տնօրենի տեղակալների աշխատանքային փաթեթ<br>✓ ԾԽ-ի աշխատանքային փաթեթ<br>✓ ԱԽ-ի աշխատանքային փաթեթ | • Կամավոր ատեստավորում<br>• Տարակարգի որակավորում<br>• Նախաձեռնողականության միջին մակարդակ<br>• ՀՀ Տարվա լավագույն ուսուցիչ |



## Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում

Կրթական ծրագրերի և կարիքների, սովորողների ուսման նկատմամբ հետաքրքրվածության, որակի առաջանցիկ և կայուն բարձրացմանը նպաստող կարևոր գործոն է ՏՀՏ-ների, կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը և ներդրումը, որի մասով՝ նախորդ 5 տարիների ընթացքում ներդրվել է ամուր և կառուցողական հիմքեր, որն էլ հնարավորություն է տալիս հաջորդ 5 տարիների ընթացքում ամբողջացնելու հիմնախնդրի իրականացումը:

Դպրոցում ՏՀՏ-ները կիրառվում են ոչ միայն դասապրոցեսները կազմակերպելու, այլ նաև ուսումնական գործընթացին համապատասխան՝ էլեկտրոնային մատյանները, աշխատողների և աշակերտների անձնական գործերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, առարկայական թեմատիկ պլանները, տնօրենի և փոխտնօրենների հաշվետվությունների, ՄԽ, ԱԽ, ԾԽ, ԿԽ խորհուրդների արձանագրությունների լրացնելը:




| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Հեռավար, համակցված, տնային-հեռավար ուսուցման կազմակերպում<br>✓ Մենթոր դպրոցի հետ ուսումնական ծրագրի կատարման ապահովում<br>✓ Էլեկտրոնային մատյանների լրացում և վերահսկողություն<br>✓ Գործածվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի կիրառություն<br>✓ Դասապրոցսների, արտադասարանական խմբակների, նախագծային աշխատանքների կազմակերպում<br>✓ Ներառական կրթության իրականացնում<br>✓ Առցանց–ընթերցասրահ, միջոցառումների կազմակերպում<br>✓ Մեդիագրագիտություն<br>✓ Վարչատնտեսական փաստաթղթերի կիրառություն<br>✓ Դպրոցի ընդհանուր գործունեության հանրային ընկալման ներկայացնում | • Համակարգիչների պակաս<br>• ՈՒսուցիչների և սովորողների համակարգչային կարողությունների միջին մակարդակ |

## Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

### Ուսումնական միջավայր

Դպրոցում հանրակրթական հիմնական ծրագրերի հիմքում դրված է սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը

- Ուսումնական գործընթաց
- Դաստիարակչական գործընթաց:

### Ուսումնական գործընթաց

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության մակարդակը պայմանավորված է դպրոցի ուսումնական միջավայրով:

Ուսումնական միջավայրի առանցքային հիմքերն են՝

- Բազմատեսակ ուսուցման մեթոդները
- Ուսուցանվող դասագրքերը
- Առարկայական կաբինետներն ու լաբորատորիաները
- Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները
- Նյութատեխնիկական, ուսումնամեթոդական սարքավորումները և դիդակտիկ նյութերը
- Արտադասարանական խմբակների ձևավորումը
- Կահավորված դասասենյակները
- Արտադասարանական /գեղագիտական, սպորտային և այլն/ միջոցառումներ կազմակերպելու՝ հանդիսությունների, սպորտային դահլիճները
- Գրադարան-ընթերցասրահը
- Դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթները
  Դպրոցում և դպրոցից դուրս առկա հասարակական համագործակցությունները:

Ուսումնական միջավայրը ըստ վերը նշվածի, այն է՝ դասասենյակների, առարկայական լաբորատորիաների, կաբինետների, ՏՀՏ-ների, սարքավորումների, դասավանդման մեթոդների, մասնագիտական որակ ունեցող մանկավարժների, սովորելու և սովորեցնելու ավանդույթների, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, այսպիսով՝ շատ կարևոր է դպրոցում ունենալ հարմարավետ, գրավիչ, մոտիվացնող ուսումնական միջավայր: Նկարագրված ուսումնական միջավայրի համար, դպրոցի զարգացման ծրագրում ընդգրկված են այնպիսի քայլեր, որոնք միտված են ուսումնական միջավայրը էլ ավելի ամբողջացնելու: Դպրոցում առկա է այնպիսի ուսումնական միջավայր, որը համեմատական կարգով տեխնիկապես հագեցած է, սակայն հնարավորություն չի ընձեռում ամբողջությամբ ինտերակտիվ, փոխներգործուն մեթոդների կիրառման համար:
Ուստի՝

Ուսումնական միջավայրի արդի նպատակն է - Հիմք ընդունելով դասավանդման նորացող մեթոդները, համընդհանուր մատչելիության չափանիշները և, իհարկե, անվտանգությունը, զարգացնել և հագեցնել առկա ուսումնական միջավայրը ուսումը խթանող, ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ժամանակակից թվային տեխնոլոգիաներով:
ՈՒսումնական միջավայրի խնդրի լուծումն է - Դասապրոցեսը ճկուն վերափոխել որպես աշխատանքային գործընթաց՝ զուգահեռ ձևավորելով սովորողների մոտիվացիան ապահովող՝ բազմանպատակ, շարժուն, ուսումնական միջավայր՝ պահպանելով նրա կենտրոնում դրված սովորողների դերի բարձրացումը:

Դպրոցը լիարժեք ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը ուսումնառության գործընթացին, իրականացնում է նաև ներառական կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են դպրոցի և դասապրոցեսի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի /մրցույթներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ/: Ներառական կրթության զարգացմանը աջակցում են դպրոցի սովորողները, աշխատակիցները, ծնողները, համայնքը:
Դպրոցում ապահոված է յուրաքանչյուր երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքը, կիրառվում է ուսուցման մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրը:
ՈՒսումնական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ նպաստի սովորողների առողջության պահպանմանն ու ամրապնդմանը:
Դպրոցում ստեղծված է համագործակցության միջավայր, օգտագործվում է համատեղ դասավանդման ձևը, սովորողները հնարավորություն են ունենում տարբեր ձևերով ներկայացնելու իրենց գիտելիքները: Հաշվի է առնվում յուրաքանչյուր սովորողի առանձնահատկություններն ու կարիքները, ստեղծված են հավասար հնարավորություններ՝անկախ սովորողների կարողություններից:

Դպրոցում ստեղծված է անվտանգ միջավայր, չկան սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական, հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Սովորողները և նրանց ծնողները համոզված են, որ դպրոցում երեխաները պաշտպանված են, տիրում է առողջ, բարոյահոգեբանական մթնոլորտ:

ՈՒսումնական գործընթացի առաջնային կարևորությունը ուսման որակն է

Նախորդ 5 տարիների ուսման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսման նկատմամբ սովորողների հետաքրքրվածությունը 5-րդ դասարանից սկսած նվազում է, որը բացատրվում է հետևյալ խնդիրներով.

- Առարկաների ավելացմամբ
- Դասվարի փոխարինումը առարկայական ուսուցիչներով
- Ինքնուրույն՝ առանց ծնողների օգնության /մեծ մասը դժվարանում են / սովորելու կարողունակության պակաս
- Միջավայրի փոփոխություն /տարրական օղակից միջին օղակ/,

որն էլ հենց ԴԶԾ-ի գերխնդիրն է, որի պահանջն է՝ նպատակաուղված աշխատանքների կազմակերպման և իրականացման համար ներդրված գործիքների նորարացման և շարունակականության ապահովում:




| | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| Տարրական | 78 | 77 | 79 | 78 | 74 |
| Միջին | 90 | 88 | 84 | 88 | 95 |
| Ավագ | 43 | 44 | 34 | 44 | 36 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | 211 | 209 | 197 | 210 | 206 |

Միևույն ժամանակ ստորև նշված աղյուսակներից երևում է, որ մանկավարժների պրոֆեսիոնալ մոտեցման շնորհիվ սովորողները հաղթահարում են նշված խնդիրները՝ ըստ որակի և առաջադիմության արդյունքների :



| | 2018-2019 Ուստարի | | 2019-2020 ուստարի | | 2020-2021 ուստարի | | 2021-2022 ուստարի | | 2022-2023 ուստարի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Որակ | Առաջա-դիմությու ն | Որակ | Առաջա-դիմություն | Որակ | Առաջադիմություն | Որակ | Առաջադիմություն | Որակ | Առաջադիմություն |
| 1-ին դասարան | | 100% | | 100% | | 100% | | 100% | | 100% |
| 2-րդ դասարան | 61% | 100% | 94% | 100% | 76% | 100% | 98% | 100% | 88% | 100% |
| 3-րդ դասարան | 87% | 100% | 88% | 100% | 82% | 100% | 55% | 100% | 95% | 100% |
| 4-րդ դասարան | 71 % | 100% | 81% | 100% | 82% | 100% | 70% | 100% | 88% | 100% |
| 5-րդ դասարան | 81% | 100% | 57% | 100% | 73% | 100% | 80% | 100% | 68% | 100% |
| 6-րդ դասարան | 93% | 100% | 68% | 100% | 67% | 100% | 71% | 100% | 76% | 100% |
| 7-րդ դասարան | 76% | 100% | 87% | 100% | 68% | 100% | 61% | 100% | 64% | 100% |
| 8-րդ դասարան | 55% | 100% | 76% | 100% | 66% | 100% | 67% | 100% | 45% | 100% |
| 9-րդ դասարան | 47% | 100% | 47% | 100% | 76% | 100% | 66% | 100% | 59% | 100% |
| 10-րդ դասարան | 71% | 100% | 56% | 100% | 71% | 100% | 60% | 100% | 75% | 100% |
| 11-րդ դասարան | 21% | 100% | 41% | 100% | 80% | 100% | 50% | 100% | 70% | 100% |
| 12-րդ դասարան | 67% | 100% | 26% | 100% | 45% | 100% | 60% | 100% | 42% | 100% |

ԴԶԾ –ի առանցքային նպատակներից է ուսման որակի բարձրացումը հանրակրթության պետական չափորոշչին և հանրակրթական պետական ծրագրին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրության միջոցով:

Խնդրի լուծումը--վերլուծելով ՈւԴԱՊ,ՆԴՎ, ներքին և արտաքին գնահատման արդյունքները, պարբերաբար կազմակերպվում են առաջխաղացմանը նպաստող աշխատանքներ և՛ սովորողների, և՛ մանկավարժների համար, որոնց արդյունքում ունենք

- ՀՊՉ-ի դրույթների վերաբերյալ ուսուցիչների վերապատրաստումների մասնակցության պատրաստակամություն,
- ՀՊՉ –ի պահանջներին համապատասխան ուսուցման կազմակերպում,
- ՈՒուցման տարբեր ակտիվ ձևերի և հնարավորությունների կիրառում,
- ՈՒսուցման հստակ նպատակների ձևավորում և փոխանակում,
- ՈՒսուցման աշխատանքների առանցքային թեմայի սահմանում, թեմաների ընտրություն և դասաժամի կառավարում,
- Թեմայի հասանելիության հարմարեցումը աշակերտին, բայց միևնույն ժամանակ խթանող աշխատանքների ընտրություն,
- Ակտիվ մասնակցությանը օժանդակող արդյունավետ ռեսուրսների սահմանում,
- Դասավանդման և ուսուցման գործընթացների մասին աշակերտների կողմից արդյունավետ հետադարձ կապի հնարավորության ստեղծում:
- Մանկավարժների ՏՀՏ ների և ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կարողունակությունների զարգացման նպատակով վերապատրաստումների, դասընթացների կազմակերպում,
- Բոլոր սովորողների ուսումնառության մասնակցության ապահովում
- ՈՒսման բարձր որակի խթանում,
- Դասապրոցեսի վարման նոր, արդյունավետ հնարքների,մեթոդների կիրառում,
- Մասնակցային գործընթացների իրականացում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում,
- Սովորողների համար շերտավոր ուսուցման կիրառում,
- Ուսման որակի մշտադիտարկում, վիճակագրական տվյալների հավաքագրում,
- ԿԱՊԿՈՒ սովորողների դիտարկում , դպրոցական մակարդակի գնահատում,
- ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ով ուսուցման կազմակերպում,

- Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպում,
- Արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպում,
- Վերանորոգված սպորտ դահլիճում առկա սպորտային գույքը նպաստում է սովորողների ֆիզիկական առողջությանը և դաստիարակությանը, որը ուսման որակի ապահովման մեծ գրավական է,
- Արտադասարանական խմբակների գործունեություն,
- Օլիմպիադաներին և մրցույթներին, վիկտորինաներին աշակերտների բավարար մասնակցություն
- Լաբորատորիաների ՏՀՏ-ի և այլ սարքավորումների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների դասաժամերին մշտապես կիրառում
- Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով դասընթացների, միջոցառումների, հանդիպումների կազմակերպում:

Սովորողների առաջադիմության, ուսման որակի ստուգման և կրթական կարիքների բավարարման նպատակով իրականացվում է հայտորոշիչ գործունեություն՝ տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, դասալսումներ, առարկայական միամսյակներ, բաց դասեր և այլն:

Գրավոր աշխատանքների անցկացում՝ մնացորդային գիտելիքների ստուգում:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
| --- | --- |
| ✓ Ցածր առաջադիմություն, արտակարգ ընդունակություններ ունեցողներին անհատական մոտեցում<br>✓ Նորարարությունների, բազմատեսակ մեթոդների կիրառություն<br>✓ ՈՒուցման տարբեր ակտիվ ձևերի և հնարավորությունների կիրառում,<br>✓ ՈՒսուցման հստակ նպատակների ձևավորում և փոխանակում<br>✓ Մանկավարժների ՏՀՏ ների և ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կարողունակությունների զարգացման նպատակով վերապատրաստումների, դասընթացների կազմակերպում,<br>✓ Բոլոր սովորողների ուսումնառության մասնակցության ապահովում<br>✓ ՏՀՏ- ների և տեխնոլոգիաների կիրառություն<br>✓ ՀՊՉ-ի պահանջի՝ կարողունակությունների ձևավորում<br>✓ Ձևավորված արժեհամակարգի զարգացում<br>✓ Հոգեբանի աշխատանք<br>✓ Ընդգրկվածություն մշտադիտարկման գործընթացում /շահառու մարմիններ, ԾԽ, ԱԽ<br>✓ Թիմային մոտեցում, հաշվետվողականության և թափանցիկության ապահովում<br>✓ Արտադասարանական խմբակներ<br>✓ 3-11-րդ դասարանների սովորողների մասնակցությունը «Մեղու» և «Կենգուրու» մրցույթներին, հաղթողները պարգևատրվել են<br>✓ Տարվա լավագույն աշակերտի խրախուսում<br>✓ ԿԱՊԿՈՒ սովորողների դիտարկում, դպրոցական | ✓ Սովորողների անձնական ՏՀՏ և հաղորդակցման տեխնոլոգիաների պակաս<br>✓ Հետաքրքրվածության և նախաձեռնողականության միջին մակարդակ<br>✓ Բակում ունենալ առանձին տարածք՝ բնության գրկում ինտերակտիվ դաս իրականացնելու համար<br>✓ Թվային նոր տեխնոլոգիաներ |

| | |
|---|---|
| մակարդակի գնահատում,<br>✓ ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ով ուսուցման կազմակերպում,<br>✓ Օլիմպիադաներին և մրցույթներին, վիկտորինաներին աշակերտների բավարար մասնակցություն<br>✓ Լաբորատորիաների ՏՀՏ-ի և այլ սարքավորումների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանության առարկաների դասաժամերին մշտապես կիրառում<br>✓ Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով դասընթացների, միջոցառումների, հանդիպումների կազմակերպում:<br>✓ Դասավանդման և ուսուցման գործընթացների մասին աշակերտների կողմից արդյունավետ հետադարձ կապի հնարավորության ստեղծում:<br>✓ Մասնակցային գործընթացների իրականացում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում,<br>✓ Սովորողների համար շերտավոր ուսուցման կիրառում,<br>✓ Ընդգրկվածություն մշտադիտարկման գործընթացում<br>✓ Ուսման որակի մշտադիտարկում, վիճակագրական տվյալների հավաքագրում | |

## Դաստիարակչական գործընթաց

Սովորողների աշխարհաճանաչման ձևավորման, նրանց կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման, գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակի ապահովման համար անհրաժեշտ և կարևոր պահանջ է նաև դաստիարակչական գործունեությունը, որի ուղղությունները դպրոցում ներդրված են և կունենան շարունակականություն դարաշրջանի հասարակության պահանջներին համապատասխան:

Նպաստել սովորողների բազմակողմանի դաստիարակության կազմակերպմանը՝ քաղաքացիա-հայրենասիրական, հոգևոր և բարոյական, ստեղծագործականության և աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքի, մտավոր, առողջարարական դաստիարակություն, սոցիալ-մշակութային և միջմշակութային, մշակութա-ստեղծագործական և գեղագիտական, անվտանգության մշակույթի և իրավական, ընտանեկան արժեքների, հաղորդակցական մշակույթի ձևավորում:

Դպրոցում մանկավարժները համագործակցում են ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում: Դպրոցում կազմակերպվում են հանդիպումներ, քննարկումներ և կայացվում համատեղ որոշումներ: ԱԽ, ԾԽ և ՄԽ մարմինների համագործակցության արդյունքում սովորողների դաստիարակության ուղղությամբ կատարված աշխատանքները գնահատվում են լավ, կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, ինչպես նաև համատեղ աշխատանքների միջոցով սովորողների մոտ ձևավորվել է աշխատանքային դաստիարակություն, որը արտացոլվում է ինտենսիվ, բանջարաբոստանային այգիների, հացահատիկային կուլտուրայի մշակման, մրգերի չորացման աշխատանքներում: Պարբերաբար կազմակերպվում են նաև իրենց կողմից մշակված մրգերի և բանջարեղենների վաճառք՝ հասույթը տրամադրելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Ռազմահայրենասիրական<br>✓ Էկոլոգիական<br>✓ Իրավական<br>✓ Աշխատանքային<br>✓ Գեղագիտական<br>✓ Խոսքի մշակույթի և էթիկայի<br>✓ Ֆիզիկական առողջության և այլն | • Սովորողների կողմից դժվար ընկալում<br>• Ընտանիքում նմանօրինակ դաստիարակության դիրքորոշման պակաս |

## Բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային համակարգի վերլուծություն

Չափազանց կարևորում եմ ուսուցիչների, ծնողների, սովորողների դերը ակտիվ մասնակցային դասավանդման, սովորողների կրթական կարիքների իրականացման, ներառականացման, կառավարման, որոշումների կայացման, ուսումնադաստիարակչական գործընթացը արդյունավետ կազմակերպման ժողովրդավարական արժեքների կիրառման և խթանման հարցում:

ՈՒստի ապրել և սովորել ժողովրդավարության պայմաններում հենց այս սկզբունքով է

նախորդ 5 տարիների ընթացքում դպրոցում ձևավորվել և շարունակական զարգացման փուլում գտնվում հասարակական տրանսֆորմացիան՝ մասնակցային մեխանիզմների և ներառական ու բազմակարծիք արժեքային միջավայրը, մշակույթը:

ԴԶԾ-ի նպատակներից է, որպեսզի դպրոցում ԲՆՄ արժեքային միջավայրը նպաստի սովորողների, մանկավարժների, ինչու չէ նաև ծնողների, ապրելաձևի, հասարակությանը լիարժեք անդամակցելու և իր դերը արժևորելու համար:

Այն նպաստում է նաև դպրոցում և հասարակության մեջ, համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցող ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների արդյունավետ փոխհարաբերությունների կարողությունների հզորացմանը, դպրոցի առաջընթացի ապահովմանը և անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների ձեռքբերմանը: Ստեղծված կրթական միջավայրը, հնարավորություն է տալիս նաև լավագույնս կրթել սովորողներին՝ դառնալու վաղվա պատասխանատու, ակտիվ և հասարակական կյանքին ներգրավված քաղաքացին: Մասնակցային գործունեությունից ուսուցման պոտենցիալը առավելագույնս արդյունավետ դարձնելու համար մեր դպրոցում աշակերտները հնավորություն ունեն քննադատաբար արձագանքելու այն ամենին, ինչ սովորում են և ինչպես են սովորում: Ըստ որի էլ քննարկումների միջոցով իրականացվում է արդյունքների գնահատում: Դպրոցում կայացած միջավայրը իրական հնարավորություն է ստեղծում սովորողին, մանկավարժին քննարկելու և բանավիճելու վիճահարույց հարցերի շուրջ, դրական ազդեցություն գործելու, առաջարկելու փոփոխություններ, ինչպես նաև ուսումնական ծրագրի շրջանակներում ավելին իմանալու այն հասկացությունների մասին, ինչպիսիք են մարդու իրավունքները, հասարակական և շրջակա միջավայրին առնչվող հարցերը:

Դպրոցում ԲՆՄ արժեքային միջավայրը հնարավորություն է ընձեռնում սովորողների սոցիալականացմանը, հարաբերություններում դրսևորում կառուցողական, համերաշխ ունակություն և կոնֆլիկտերի խաղաղ, համագործակցային կարգավորման հմտություն: Դպրոցը համագործակցում է սովորողների ակտիվությանը խթանող, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող հասարակական կազմակերպությունների, այլ ուսումնական հաստատությունների հետ, ինչպես նաև խրախուսում սովորողների, ուսուցիչների և ծնողների շրջանում հասարակական գործունեության դրսևորումները, որոնք նպաստում են մասնակցայնությանը, ինտեգրմանը ուսումնադաստիարակչական գործընթացում կատարելագործում ապահովող ԲՆՄ միջավայրի պահպանմանը:

Դպրոցում կարևոր դեր և նշանակություն ունի ներառական կրթությունը , որը չի բացառում որևէ երեխայի կրթությունը: Ներառական կրթության հիմքում մարդու՝ կրթությունից օգտվելու իրավունքն է՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին: Դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու երևան են բերվում նրա ռեսուրսները և ներուժը:

Դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը՝ 5:

ՈՒսուցման ընթացքում ուսուցիչները ԱՈՒՊ լրացնելիս ուշադրությունը կենտրոնացնում են սովորողի բազմազանության և կարողունակությունների վրա:

ՈՒսուցիչ-ծնող-աջակցության ծառայություն ցույց տվող մասնագետ փոխհարաբերության արդյունքում ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցումը կազմակերպվում է նպատակային,մատչելի խելամիտ հարմարեցումներով, ինչպես ռեսուրս սենյակում, այնպես էլ դասարաններում:

Դպրոցը համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ, որի սոցմանկավարժը և հատուկ մանկավարժը դպրոցում իրականացնում են աջակցության ծառայություններ ԿԱՊԿՈՒ սովորողների

համար, ինչպես նաև նրանց կողմից կազմակերպվում է հանդիպումներ, քննարկումներ մանկավարժների, ուսուցչի օգնականների հետ ԱՈՒՊ-ների լրացման, ԿԱՊԿՈՒ սովորողների հետ արդյունավետ աշխատանքներ կազմակերպելու համար:
Դպրոցում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքներին համապատասխան ուսուցման կազմակերպման համար արդյունավետ աշխատանքներ են իրականացվում նաև մանկվարժ-ուսուցչի օգնական համատեղությամբ:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Սովորողների ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորում,ամրապնդում<br>✓ Սովորողների նպաստավոր գործողություններ իրենց կրթական սոցիալականացման, իրավունքների պաշտպանության, առողջության պահպանման արդիականացմանը<br>✓ Մասնակցային և բազմակարծության գործընթաց կառավարման,ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, հանրային քնարկման, որոշումների կայացման, ռեսուրսների բաշխման, ուսման և դաստիարակման որակի համար:<br>✓ Համագործակցություն աշակերտների ակտիվությանը խթանող, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող հասարակական կազմակերպությունների,ուսումնական հաստատությունների հետ<br>✓ դպրոցում և հասարակության մեջ, համայնքի,տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցող ուսուցիչների,սովորողների և նրանց ծնողների արդյունավետ փոխհարաբերությունների կարողությունների հզորացմանը<br>✓ իրական հնարավորություն է ստեղծում սովորողին,մանկավարժին քննարկելու և բանավիճելու վիճահարույց հարցերի շուրջ | • Մանկավարժների, ծնողների ոչ լիարժեք դիրքորոշում, նրանց կողմից քաղաքացիական հասարակության դերակատարության հաստատուն ստանձնում<br>• Որոշ մանկավարժների և ծնողների անհանդուրժողականություն բազմակարծության և մասնակցային գործընթացները որպես ժողովրդավարության գործիք |

## Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Սովորողների ուսուցման և կրթական կարիքները իրականացնելու նպատակով նախորդ և հաջորդ տարիների ԴԶԾ-ի հիմնական խնդիրներից է, որ արդի ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան մանկավարժը ունենա դասավանդվող առարկայի բարձր իմացության աստիճան, ստեղծագործական միտք, երեխայի բնույթի իմացություն, ինքնակատարելագործման, ինքնազարգացման ցանկություն, զարգացող տեխնոլոգիաների տիրապետում և կիրառություն: Այս ամենը, որպես նպաստող շարժիչ ուժ, հիմք են ԴԶԾ-ով իրականացված, իրականացվող և արդյունավետ ու բարձր ՕԳԳ ակնկալող աշխատանքները:

Դպրոցում ձևավորված է ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-սովորող, ուսուցիչ-ծնող, ուսուցիչ-վարչական աշխատող, սովորող-տնօրինություն բարեկիրթ փոխհարաբերություններ անվտանգ, բարոյահոգեբանական առողջ միջավայր որը հիմնարար ձևով ներկայանում է որպես փոխհարաբերությունների արժեհամակարգ: Այն ձևավորվել է միջանձնային բարձր մակարդակի փոխհարաբերությունների հիման վրա, քանի որ արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել անձանց հետ շփումից զատ: Քանի որ արժեքային համակարգի հիմքում յուրաքանչյուր անձի /սովորող, աշխատակից/ սեփական արժեքների նկատմամբ պատկերացումների ընկալումն է, իսկ սեփական արժեքները ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել, ուստի կարևորում եմ որպես հիմնայուն, պահպանել դեպի դպրոցը, դեպի հայրենիքը, դեպի ուսումը, գիտելիքը այդ կարևոր արժեքների հիմնավոր արժեհամակարգը, որը իրականացվում է պարբերաբար մանկավարժական, ծնողական և աշակերտական համակազմերի հետ աշխատանքների, միջոցառումների, հանդիպումների միջոցով:

Անձն իր բնույթով արժևորման, գնահատման կարիք ունի: Եվ երբ ղեկավարը կարևորում է այդ դրսևորման ձևը, այն կարող է նպաստել անձի մտավոր և հոգևոր տարբեր ընկալումների ու դրսևորումների ի հայտ գալուն:

Առանձնացնում եմ նաև արժանիքներ, որոնք անհրաժեշտ են անձի՝ ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիքների ձեռքբերման համար, այլ նաև կձևավորի ցանկալի հատկություն, այն է՝ էլ ավելի «հաստատակամություն», «աշխատասիրություն», «համբերատարություն», «սրտացավություն», «մասնագիտական որակի բարձրացում ինքնակրթության և ինքնազարգացման միջոցով», ինչին միտված է իմ կողմից մինչ այդ և հաջորդ տարիների ընթացքում խրախուսման մոդելի կիրառումը:

Ըստ Աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ տեսակները.

ա) շնորհակալության հայտարարում
բ) միանվագ դրամական պարգևատրում
գ) հուշանվերով պարգևատրում
դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում
ե) կարգապահական տույժի հանում:

Աշխատողների Խրախուսման համար հիմք է հանդիսանում՝
ա) աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների գերազանց կատարումը
բ) անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար տրված լրացուցիչ հանձնարարությունը ժամանակին և պատշաճ որակով կատարումը
գ) Դպրոցում երկարամյա բարեխիղճ աշխատանքը
դ) կոլեկտիվ և միջանձնային հարաբերություններում օրինակելի վարքագիծ դրսևորելը
ե) աշխատանքային կարգապահությունը և այլն:

Դպրոցում իմ կողմից ներդրվել է խրախուսման մեխանիզմ, որը իր մեջ ներառում է տարբեր ուղղություններ, այդ թվում սովորողների համար՝
«Լավագույն աշակերտ»,
«Լավագույն աշակերտուհի»
մանկավարժների համար՝
«Լավագույն դասղեկ»,
«Լավագույն դասվար»,
«Լավագույն ուսուցիչ»,
«Լավագույն միջոցառում կազմակերպող»
անվանակարգերում տարեկան խրախուսում, որն ուղեկցվում է դրամական խրախուսանքի, պատվոգրերի, շնորհակալագրերի, խրախուսական այլ նվերների տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվում նաև ծնողական համայքին՝ նրանց համար կազմակերպելով նաև «Լավագույն ծնող» անվանակարգում խրախուսանք:

Չափազանց կարևորում եմ ինքնակրթությունը, դրա իրականացման համար հնարավորությունների ստեղծումը, քանի որ 21-րդ դարում թե՛ տեխնոլոգիական, թե՛ կրթական, և թե՛ դրան նպաստող այլ գործիքները օր օրի փոփոխվում են, զարգանում, որոնց իմացությունը և դրանց կիրառումը էլ ավելի արդյունավետ և օգտակար է դարձնում մանկավարժի գործունեությունը դպրոցում, ինչն էլ խթանում է դպրոցի՝ տվյալ անձի մասնագիտական հարթության շրջանակներում որակի բարձրացմանը:

Ուստի դրա համար դպրոցում ստեղծվել է գրադարանին կից ընթերցասրահ՝ հագեցած տարբեր անհրաժեշտ ուսումնամեթոդական ձեռնարկներով, ուղեցույցներով, հարմարավետ գույքով, արագ ինտերնետային հասանելիությամբ, համակարգիչներով: Առանձնացված հատված կա նաև սովորողների համար՝ սեփական գիտելիքները ինքնակրթությամբ էլ ավելի զարգացնելու համար, քանի որ գյուղում ապրում են նաև այնպիսի ընտանիքներ, ովքեր չունեն ոչ ինտերնետային հասանելիություն, և ոչ էլ համակարգիչ: Այս ամենը մշտապես իմ ուշադրության կենտրոնում է և խրախուսվում է իմ կողմից :

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Հերթական վերապատրաստումներ<br>✓ Նպատակային հրավիրված մասնագետների կողմից վերապատրաստումներ<br>✓ Ինքնազարգացման, ինքնակրթության միջավայրի ստեղծում<br>✓ Ստեղծված բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ամրապնդում, վարքագծի սկզբունքների կիրառման միասնականություն<br>✓ Հանրության վստահություն մանկավարժների նկատմամբ<br>✓ Տնօրենի կողմից-մանկավարժը արժեհամակարգի կարևոր մաս<br>✓ Դպրոցում՝<br>Լավագույն ուսուցիչ<br>Լավագույն դասղեկ<br>Լավագույն միջոցառում կազմակերպող ուսուցիչ<br>Լավագույն ծնող<br>Լավագույն աշակերտ<br>Լավագույն աշակերտուհի | • Կամավոր ատեստավորման նկատմամբ վստահության պակաս<br>• Որակավորման տարակարգի նկատմամաբ պասիվություն |

## Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը դրանց արդյունավետության ցուցանիշների շեղումների եվ պլանավորման խնդիրների տեսանկյունից

Հաստատության ուսումնական նպատակով ծախսերի վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք համապատասխանում են նախկին տնօրենի կողմից ներկայացված զարգացման ծրագրերի իրականացմանը:

Հիմք՝ նախահաշիվներ և ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 11.01.2023 N 4-Ա կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի տրված տեղեկանքում ուսումնական նպատակով ծախսերի ցուցանիշների շեղման բացակայություն:

ՀՀ Հանրակրթության մասին օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի համաձայն՝ դպրոցի տնօրենը ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու

համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար։

2022-2023 ուստարվա ծախսերը

| | |
|---|---|
| 1.Սովորող/ուսուցիչ հարաբերություն | 7,8 |
| 2.Սովորող/սպասարկող վարչական անձնակազմ հարաբերությունը | 18,7 |
| 3.Դասարանների միջին խտությունը | 17,1 |
| 4.Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը | 264000 |
| 5.Ուսուցչի միջին աշխատավարձը | 108800 |
| 6.Վարչական աշխատողների միջին աշխատավարձը | 168500 |
| 7.Սպասարկող կազմի միջին աշխատավարձը | 95600 |
| 8.Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը | 0 |
| 9.Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը | 0 |
| 10.Հովանավորչական դրամաշնորհային միջոցների տարեկան չափը | |
| 11.Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը | 47800000 |
| 12. Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան չափը | 2588000 |
| 13.Նոր գույքի,այդ թվում սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան չափը | 0 |

Դպրոցի բյուջեի թիվը ըստ տարիների

| 2018-2019 | 2029-2022 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 46768900 դր. | 50461900 դր. | 50272900 դր. | 52255900 դր. | 54400200 դր. |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| ✓ Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում<br>✓ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ<br>✓ ՈՒսուցիչների հերթական վերապատրաստումներ պետական բյուջեից | • Դասարանների ցածր թիվ<br>• Պետական բյուջեից քիչ ֆինասավորում<br>• Նյութատեխնիկական բազայի համալրում /կրթական կարիքներ,ներառական կրթություն/պետական բյուջեից 2018-2019, 2019-2020 |

| | |
|---|---|
| 2020-2021 ուստարի-120000 (հարյուր քսան հազար դրամ )<br>2021-2022 ուստարի-168000 (հարյուր վաթսունութ հազար դրամ )<br>2022-2023 ուստարի-192000 ( հարյուր իննսուներկու հազար դրամ)<br>✓ Ընդհանուր վերապատրաստումների գումարը 480000 դրամ.<br>✓ Տրանսպորտի փոխհատուցման գումարը 39800 դրամ է:<br>✓ Ծնողական և մանկավարժական խորհուրդների համատեղ նիստի արդյունքում սոցիալապես անապահով համակարգում ընգրկված ընտանիքի երեխաներին անվճար դասագրքերի վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեից | ուստարիներին ուսուցիչների հերթական ատեստավորում չի իրականացվել |

Գեղարվեստական գրականություն-1260 կտոր / Դասագրքեր-13 474

1-4-րդ դասարանների դասագրքեր (անվճար)

| 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 505 կտոր | 434 | 274 | 394 | 616 |
| | | | | |

5-12-րդ դասարանների դասագրքեր

| 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 2359 կտոր | 2273կտոր | 2229 կտոր | 2181 կտոր | 2209 կտոր |

2018-2023 թթ.սոցիալապես անապահով աշակերտների համար վճարված դասագրքերի գումարը

| 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 80100 դրամ | 76700 դրամ | 80200 դրամ | 68700 դրամ | 75600 դրամ |

## Խորհրդակցական մարմիններ

Օրինակելի կանոնադրության համաձայն՝ դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորված են խորհրդակցական մարմիններ

1. Մանկավարժական խորհուրդ
2. Առարկայական մեթոդական միավորումներ
3. Ծնողական խորհուրդ
4. Աշակերտական խորհուրդ

## Մանկավարժական խորհուրդ

Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում, վերջինս ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուստարի ժամկետով: Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամներ են: Մանկավարժական խորհուրդը քննարկում և որոշումներ է կայացնում Դպրոցի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում: Կազմվում է աշխատանքային պլան և նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Մանկավարժական խորհրդի նիստերի քանակը

| 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 9 հերթական<br>4 արտահերթ | 7 հերթական<br>1 արտահերթ | 8 հերթական<br>3 արտահերթ | 7 հերթական<br>5 արտահերթ | 10 հերթական<br>2 արտահերթ |

Մանկավարժական խորհուրդը քննարկել է

- Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը
- Կրության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը:
- Տնօրենի ներկայացրած դպրոցի զարգացման ծրագրի կատարողականությունը
- Ուսուցման բովանդակության սովորողների ուսումնառության որակի, արտադասարանական խմբակների, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների մասին
- Տնօրենի և փոխտնօրենների ներկայացված ուսումնադաստիարակչական գործունեության

հաշվետվությունները

- Ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող այլ հարցեր

Մանկավարժական խորհրդի քննարկումներում մշտապես առանցքային են եղել բազմակարծությունը, դրանց վերլուծությունը և հավաքական պատկերացման ձևավորումը:

Մանկավարժական խորհուրդը ընդունել է որոշումներ

- Դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը
- Սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու
- Սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու
- 120-200 և 200-ից ավելի բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի
- Դպրոցի շրջանավարտների ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու
- Դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում տնօրենին՝ հաստատման
- Արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների հետ լրացուցիչ պարապունքների կազմակերպում
- Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ լրացուցիչ պարապունքների կազմակերպում
- Երկարօրյա խմբերի ձևավորում
- Առարկայական օլիմպիադաների մասնակցության համար սովորողների հետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում
- Մասնագիտական կողմնորոշման արտադասարանական խմբակների ձևավորում
- Դպրոցում կազմակերպված բոլոր աշխատանքների վերաբերյալ մասնակցային որոշումների ընդունում

ՆՊԱՏԱԿ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Խնդիրներ

Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների և նորարարությունների կիրառման կարողությունները

Ուսուցիչների մեջ ձևավորել ուսուցանող գնահատման իրականացման բավարար հմտություններ

Զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառումը

Գործողություններ

1. Առարկայական մեթոդմիավորներում քննարկել խնդիրը, բացահայտել կարիքները
2. Ուսուցիչներին մասնակից դարձնել համացանցային հարթակներում կրթական տարբեր կազմակերպությունների կողմից մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով իրականացվող վերապատրաստումներին:
3. Պարբերաբար կազմակերպել սեմինար -պարապունքներ, որտեղ փորձառու ուսուցիչները կներկայացնեն իրենց փորձը:
4. Տնօրենության կողմից կազմակերպել դասալսումներ, արդյունքները վերլուծել ՄՄ նիստերում:

1. Մանկավարժների ուժերով մշակել ուսուցանող գնահատման գործիքներ (հարցաթերթեր, ռուբրիկ, առաջադրանքներ, թեստեր):
2. Կազմակերպել խորհրդակցական սեմինար դպրոցում գործող 5 մեթոդ միավորումների նախագահների և ուսուցիչների հետ:
3. Իրականացնել ուսուցանող գնահատման արդյունավետության գնահատումը:

1. Համակարգչային բավարար գրագիտություն չունեցող ուսուցիչների համար դպրոցում կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:
2. Յուրաքանչյուր ուսումնական առարկայի համար ստեղծել ինտերնետային պաշարների բանկ:
3. Կազմակերպել ԷԿԴԱՄ, ինֆորմատիկայի և այլ առարկաների ուսուցիչների կողմից համատեղ վարվող դասեր:

Ներդնել բազմակարծության և մասնակցային գործիքներ մանկավարժների դիրքորոշումները ներկայացնելու ուսուցման, դաստիարակության և կառավարման ոլորտներում

## Դպրոցում գործող մեթոդական միավորումներ

Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Կարող են նաև մեթոդական միավորումներ ձևավորվել հարակից առարկաների ուսուցիչներից: Դպրոցում գործում է 5 մեթոդական միավորում: Կազմվում է աշխատանքային պլան և նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Առարկայական մեթոդական միավորումները նիստերը գումարում են առնվազն ամիսը մեկ անգամ՝ սահմանված կարգով: Առարկայական մեթոդական միավորումները՝

- Քննարկում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանը
- Նպաստում են ուսուցիչների որակավորման բարձրացմանը
- Ուսումնասիրում և ընդհանրացնում են մանկավարժների փորձը և ներդնում գործնական աշխատանքում
- Սահմանված կարգով կազմակերպում փորձարկվող դասագրքերի փորձաքննություն
- Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին
- Մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն
- Որոշում է կայացնում, կազմակերպում դասընթացներ կամավոր ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհմանը մասնակցող ուսուցիչների հետ
- Կազմակերպում դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ, վիկտորինաներ և միջոցառումներ
| Գավառի երաժշտական ուսումնարան | Մասնագիտական կողմնորոշում | Երաժշտական ունակություններ ունեցող երեխաների մասնակցությամբ միջոցառումների կազմակերպում և՛ դպրոցում, և՛ ուսումնարանում | 1.Հանդիպումներ չեն կազմակերպվել՝ անբավարար<br>2.հանդիպումներ կազմակերպվել են՝ բավարար<br>3.միջոցառումների կազմակերպում և՛ դպրոցում, և՛ ուսումնարանում՝գերազանց |

| | | | |
|---|---|---|---|
| Գավառի սպորտ դպրոց | Մասնագիտական կողմնորոշում | Տարբեր մարզաձների մրցույթների կազմակերպում և՛ դպրոցում, և՛ սպորտ-դպրոցում | 1.Հանդիպումներ չեն կազմակերպվել՝անբավարար 2.հանդիպումներ կազմակերպվել են՝բավարար 3.մրցույթների կազմակերպում և՛ դպրոցում, և՛ ուսումնարանում՝գերազանց |
| Կրթության կառավարման մարմին | Կառավարման մարմինների կողմից հրապարակված նորմատիվ իրավական ակտերի, որոշումների, հրահանգների, ցուցումների միջոցով, օրենքով սահմանված կարգով, դպրոցի կառավարման և ղեկավարման կազմակերպում և իրականացում | Դպրոցում հանրակրթական ծրագրերի, վարչատնտեսական աշխատանքների, ի շահ դպրոցի և սովորողի, իրականացում, շահագրգիռ մարմինների մասնակցային համագործակցության արդյունքում | 1. Նորմատիվ իրավական ակտերի խախտումներով աշխատանքը՝ անբավարար, 2. Առանց խախտումների աշխատանքը՝ լավ: |

| | | | |
|---|---|---|---|
| ԿԶՆԱԿ | Ուսուցման կազմակերպման մեթոդաբանությաn ապահովում, ուսման որակի բարձրացում | Հանրակրթական ծրագրերի պահանջների ապահովում. դասալսումներ, գրավոր աշխատանքներ, սեմին արներ և այլն | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար,<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար,<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ,<br>4. ապահովվել են ներկայացված կետերը՝ գերազանց |
| Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա | Հաղթանակներ, մրցանակներ, Դպրոցի հեղինակության բարձրացում և հանրայնացում | Մանկավարժների, տնօրենի, աշխատակիցների, ծնողների ձևավորված ֆուտբոլային թիմի շարունակական մասնակցությունը ՀՀ- ում կազմակերպվող մրցաշարերին Աշակերտների ձևավորված ֆուտբոլային թիմի շարունակական մասնակցությունը ՀՀ- ում կազմակերպվող մրցաշարերին | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար,<br>2.մրցույթների մասնակցությոն ՝ բավարար,<br>3.մրցույթի արդյունքում հաղթանակ՝ լավ,<br>4. հաղթանակ և նյութական պարգև՝ գերազանց |

| | | | |
|---|---|---|---|
| Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա | Հաղթանակներ մրցանակներ, Դպրոցի հեղինակության բարձրացում և հանրայնացում | Մանկավարժների, տնօրենի, աշխատակիցների, ծնողների ձևավորված վոլեյբոլի թիմի շարունակական մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող մրցաշարերին Աշակերտների ձևավորված վոլեյբոլի թիմի շարունակական մասնակցությունը ՀՀ ում կազմակերպվող մրցաշարերին | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար, 2.մրցույթների մասնակցություն ՝ բավարար, 3.մրցույթի արդյունքում հաղթանակ՝ լավ, 4. հաղթանակ և նյութական պարգև՝ գերազանց |

Բազմակարծիք, ներառական և մասնակցային ժողովրդարության գործիքների կիրառությունը և դրանց գնահատման չափանիշները

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գործառույթներ | Գնահատման չափանիշ |
|---|---|---|---|
| Դպրոցում ժողովրդավարութ-յան սկզբունքով ստեղծված արժեքային միջավայրի ապահովում | Բոլորի համար հավասար իրավունքներ, պարտականութ-յունների կատարման պարտավորված ություն Հաջողութունն ե րը և թերությունները կլինեն համընդհանուր Յուրաքանչյուր ը իրեն կզգա արժևորված, որն էլ ուղիղ համեմատական ձևով կիհանգեցնի ուսման որակի, կատարվող աշխատանքի և ընդհանուր առմամբ բոլորի կյանքի բարվոքության | Դպրոցի կառավարման, ղեկավարման, Ուսումնադաստիարակչա-կան գործունեության կազմակերպման, կառավարման և խորհրդակցական բոլոր ոլորտներում. /ՄԽ, ԾԽ, ԱԽ, ԿԽ,ՄՄ/ օրակարգային հաստատուն հարց պետք է լինի ժողովրդավարության գործիքների կիրառությունը, որոնք էլ պետք է հիմք լինեն քնարկումնների, առաջարկությունների, որոշումներ կայացնելու, իրենց դիրքորոշումները ներկայացնելու, ընտրելու և ընտրվելու | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար, 2.գործիքներն կիրառվել են մասամբ՝ բավարար, 3.միջոցներ և գործիքներն կիրառվել են լիարժեք՝ լավ, 4. ապահովվել է ժողովրդավա-րություն՝ գերազանց |

Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման միջոցների կիրառումը և դրանց գնահատման չափանիշները

Դպրոցը սոցիալականացման կարևոր օղակ է, իսկ դասարանը՝ խումբ,որտեղ ինտենսիվորեն ձևավորվում է յուրաքանչյուր սովորողի ես- ը, ուստի Դպրոցը պարտավոր է ապահովել ուսուցիչ-սովորող,սովորող-սովորող ,ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունների այնպիսի միջավայր, որտեղ բացառվեն բուլլինգի հնարավոր դրսևորումները:

| Գործողություններ | Ակնկալվող արդյունք | Գործառույթներ | Գնահատման չափանիշ |
|---|---|---|---|
| Դպրոցում ապահովել հոգեբանական անվտանգ միջավայր<br><br>Համագործակցություն Ոստիկանության և Վորլդ- Վիժն-ի հետ | Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով ԿԱՊԿՈՒ սովորողները ապահով են և անվտանգ:<br><br>Ընդգրկված են ուսուցման և Դպրոցի գործունեության մեջ<br><br>ՈՒսման որակի բարձրացում | Հալածանքի,բռնության, օտարման կանխարգելման միջոցառումների կազմակերպում և վերահսկողություն Բացահայտել, իրազեկել, և՛ ծնողներին, և՛ մանկավարժներին Բռնության,հալածանքի կամ օտարման դրսևորման ձևին համապատասխան կազմակերպել խորհրդատվություններ, քննարկումներ,հանդիպումներ Զրույցներ-ՄԽ-ում,ԾԽ-ում,ԱԽ-ում, Դասղեկի ժամին, անհատական | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝անբավարար<br>2.ապահոված է անվտանգ միջավայր՝բավարար<br>3.սովորողների ընդգրկվածությունը 80 % է՝լավ<br>4.նշված բոլոր կետերը իրականացվում են՝գերազանց |

Աշխատակազմին արժևորելու, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները

| Գործողություններ | Ակնկալվող արդյունք | Գործառույթներ | Գնահատման չափանիշ |
|---|---|---|---|
| Աշխատակազմի արժևորում | Բարձր որակական ցուցանիշներ Աշխատակազմի յուրաքանչյուր աշխատակցի ինքնագնահատում, դիրքորոշման հաստատակամություն, | Ապահովել և վերահսկել դպրոցում աշխատակիցների բարեվարքության վարքականոնները Պարբերաբար ներկայացնել և քննարկել ՄԽ,ԾԽ,ԱԽ,ԿԽ,ՄՄ | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մինչև |

| | | | |
|---|---|---|---|
| | ազատ ընտրել և ընտրվել, մեթոդների ինքնուրույն ընտրություն, դպրոցի տարբեր ոլորտների խնդիրների քննարկման և որոշումների կայացման՝ բազմակարծություն և մասնակցություն | և տալ արժանի գնահատական | 40%՝ բավարար<br>3.մինչև 80%՝լավ<br>4.100%՝ գերազանց |
| Ինքնակրթության միջավայրի ձևավորում | Նոր մեթոդների և մոտեցումների կիրառում<br>Ժամանակակից հաղորդակցման տեխնոլոգիաների վարժ կիրառություն | Ապահովել համապատասխան միջավայր և տրամադրվածություն<br>Հատուկ սենյակ, տեխնիկական սարքավորումներ, միջոցներ, մեթոդական գրականություն, մասնագետի աջակցություն | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝բավարար<br>3. տրամադրված է սենյակ և տեխնիկական սարքավորումներ՝լավ<br>4.3-րդ կետին համատեղ մանկավարժների ակտիվ գործունեություն՝գերազանց |
| Խրախուսման միջոցներ | Աշխատանքային բարձր ՕԳԳ, մոտիվացիա մասնագիտական որակների բարձրացման, մյուսների համար որպես՝<br>օրինակ՝շարժիչ ուժ | Դիտարկել, վերլուծել, արդյունքները գնահատել որպես՝<br>Լավագույն ուսուցիչ<br>Լավագույն դասղեկ<br>Լավագույն միջոցառում կազմակերպող մանկավարժ | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.բանավոր գնահատում խրախուսում՝ բավարար |

| | | | |
|---|---|---|---|
| | | Պարզևատրում պատվոգրով և դրամական խրախուսում | 3.պատվոգրով խրախուսում՝ լավ<br>4.պարզևատրում և՛ պատվոգրով և՛ դրամական՝ գերազանց |

Օրենքով սահմանված նորմատիվ, ներքին իրավական ակտերի վարման, կիրառման և թափանցիկության, հաշվետվողականության ապահովում

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գործառույթներ | Գնահատման չափանիշ |
|---|---|---|---|
| Դպրոցավարության՝ նորմատիվ իրավական ակտերի իրազեկում և գործածություն | Դպրոցավարություն Օրենքի, Կարգերի և Ընթացակարգերի սահմաններում Առանց խախտումների ի շահ սովորողի և մանկավարժի, որոշումների և հրամանների կատարողականություն | Իրազեկում իրականացնել՝ ժողովների, նիստերի, էլեկտրոնային և թղթային տարբերակներով | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար,<br>2. միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար,<br>3. միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ,<br>4. ապահովվել է Դպրոցի փաստաթղթաշրջանառության ու գործավարության համապատասխանությունը ՀՀ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | օրենսդրությա նը՝ գերազանց |
| Ներքին իրավական ակտերի ընդունում դպրոցի աշխատակիցների պարտականությունների և իրավունքների շրջանակներում | Յուրաքանչյուրն իր տեղում, իր պարտակա-նությունների կատարման շրջանակում | Ներքին իրավական ակտերն ընդունել օրենքով սահմանված կարգով՝ պահպանելով յուրաքանչյուրի աշխատելու իրավունքները | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար, 2. միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար, 3. միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ, 4.ապահովվել է նշված կետերը՝ գերազանց |
| Դպրոցի ընդհանուր գործընթացի կառավարման կազմակերպում և իրականացում | Օրենքով պաշտպանված լինել Անաչառ վերաբերմունք ղեկավարի կողմից | Դպրոցի ընդհանուր գործընթացի կառավարման, կազմակերպման և իրականացման որոշումները ընդունել ժողովրդավարության՝ բազմակարծության և մասնակցային սկզբունքներով՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար, 2. միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար, 3. միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ, 4.ապահովվել է նշված կետերը՝ գերազանց |
| 4. Հաշվետվություններ | Կատարողականության բարձր ցուցանիշ | Ըստ պահանջի և ժամանակացույցի ներկայացնել հաշվետվություններ | 1.Հաշվետվություններ չեն ներկայացվել՝ անբավարար 2.հաշվետվու |

| | | | |
|---|---|---|---|
| | թափանցիկությաև ապահովում | | ներկայացվել են ոչ ժամանակին՝ բավարար 3.հաշվետվություններ ներկայացվել են մասամբ՝լավ 4.հաշվետվությունները ներկայացվել են ըստ պահանջի և ժամանակին՝ գերազանց |

## Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը, մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Ռիսկը ազդեցություն է, որը ներգործում է ԴԶԾ-ի ռազմավարության վրա և որևէ գործունեության ժամանակ անբարենպաստ իրավիճակի կամ անհաջող ելքի առաջացման հավանականությունն է: Ռիսկից խուսափելու մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ներկայացված ԴԶԾ-ն իրատեսական է, և մշակված են այնպիսի միջոցառումներ, որոնք կբացառեն կամ կմեղմացնեն ռիսկի կոնկրետ տեսակի առաջացումը:

* Դպրոցի շենքային պայմանների բարելավում
* Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական, ենթակառուցվածքների ստեղծում, շարունակական նորացում և համալրում
* Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

Ռիսկերը

- ✓ Աշակերտ թվի նախատեսվածից քիչ աճ
- ✓ Ոչ բավարար պետական բյուջե
- ✓ Դպրոցի՝ լրացուցիչ աղբյուրներից ֆինասավորման բացակայություն
- ✓ Շենքի մաշվածության չափի ավելացում
- ✓ ՈՒսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ կարիքների ոչ ճիշտ գնահատում և ներկայացնում
- ✓ Նպատակային ներդրումների պակաս կամ բացակայություն

- ✓ Բարեգործությունների պակաս կամ բացակայություն
- ✓ Ֆորսմաժորային իրավիճակ

Ռիսկերի ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Նախադպրոցական /ավագ տարիքային խումբ՝ 4-6 տարեկան/ ծրագրի իրականացում

Հիմնադրի սահմանած ձեռնարկատիրական գործունեությունների իրականացում

Բարեգործական նպատակային ներդրումներ /խելամիտ և իրատեսական առաջարկություններ/

ՀՀ կառավարության սահմանած մրցույթային կարգով և ուղիղ դրամաշնորհի ձևով պետական բյուջեից լրացուցիչ ֆինասավորում /ծավալել ակտիվ մասնակցություն/

ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների ու կազմակերպությունների նվիրատվություններ /խելամիտ և իրատեսական առաջարկություններ/

Դպրոցի ձեռքբերումների, թափանցիկ գործունեության, սովորողների ուսումնառության և հաջողությունների, հանգստի ու ժամանցի լուսաբանումը դպրոցի կայքէջերում, ինչպես նաև համագործակցություն համայնքի նախադպրոցական հաստատությունների հետ՝ երեխաների ընդունելության խթանման միջոց

Համագործակցություն մարզպետարանի հետ դպրոցահասակ երեխաների դպրոց ընդգրկելուն, ինչպես նաև շենքային և նյութատեխնիկական բազայի համալրում՝ իր լիազորությունների շրջանակներում

Սովորողների ծնողների և համայնքի ցանկության դեպքում վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծրագրեր և մասնագիտական այլ ծառայությունների կազմակերպում՝ Կարգի համաձայն.

Դպրոցի տարածքների՝ վարձակալության հիմունքներով հանձնում

Դպրոցամերձ մրգատու այգուց, բանջարաբոստանային բանջարեղեններից, մրգերի չորանոցից, հացահատիկի մշակումից ստացված եկամուտներ

Արդյունավետ համագործակցություն համակարգողի հետ

Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

* Սովորողների անհատական կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքների իրականացում
* ՈՒսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցություն, ուսումնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովում, ըստ չափորոշչի՝ ութ կարողունակությունների, հիմնական ծրագրերի բովանդակության չորս բաղադրիչների ձեռքբերում և ձևավորում, ինչպես նաև նախասիրությունների և կրթական պահանջների բավարարում:

Ռիսկերը

- ✓ Ուսուցման արդյունավետության, ուսուցիչների մասնագիտական, մեթոդամանկավարժական կարողությունների, շահագրգռվածության պակաս
- ✓ Սովորողների կրթական կարիքների ոչ խելամիտ դիտարկման, գնահատման համապատասխան գործողությունների կազմակերպում
- ✓ Ծնողի բացթողումը երեխայի դպրոց ընդգրկվելուն և կրթություն ստանալուն
- ✓ Սովորողի կողմից ուսուցման նկատմամբ հետաքրքրվածության պակաս
- ✓ Շենքային և նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայի ուսուցման բովանդակությանը ոչ համապատասխան
- ✓ Ֆորսմաժորային իրավիճակ:

Ռիսկերի ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Ուսուցիչների վերապատրաստումների արդյունավետության բարձրացում, ինքնակրթության և ինքնազարգացման խթանում, խրախուսանքի տարբեր միջոցների կիրառում.

Սովորողների կրթական կարիքների բացահայտման, դիտարկման, գնահատման և իրականացման համար կազմակերպում և համագործակցում դպրոցի համապատասխան մասնագետների, ՏՄԱԿ- ի, ԿԶՆԱԿ- ի, տարածքային կառավարման մարմնի, ԾԽ հետ

Համագործակցություն՝ դպրոց-տարածքային կառավարման մարմին-համայնք՝ երեխաներին ժամանակին դպրոց ընդգրկելու համար

Սովորողներին արտադասարանական և արտադպրոցական պարապմունքների մեջ ինտենսիվ ընդգրկում

Մանկավարժական համակազմի պրոֆեսիոնալ մոտեցում

Սովորողներին մոտիվացնող միջոցառումների կազմակերպում (պարգևատրումներ, խրախուսումներ,պատվոգրեր և այլն)

Շենքային և նյութատեխնիկական բազայի ուսուցման բովանդակությանը համապատասխանեցնելու գործողությունները ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով կազմակերպում

Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

* Մանկավարժական համակազմի մասնագիտական գիտելիքներ և հմտություններ՝մանկավարժության տեսության և պրակտիկայի արդի զարգացումների, այդ թվում՝տեխնոլոգիաների մանկավարժության մեջ կիրառության, ներառականության ապահովման ուղղությամբ, հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի, ուսումնական, բովանդակային, տեսության և մեթոդիկայի հիմնախնդրի, կարողությունների ապահովում:

Ռիսկերը

- ՌԻսուցիչների մասնագիտական, մեթոդամանկավարժական կարողությունների, շահագրգռվածության պակաս
- Նորարարությունների ներդրման ինքնավստահության պակաս
- Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման և տեխնոլոգիաների կիրառության կարողունակությունների պակաս
- Ինքնակրթության և ինքնազարգացման մոտիվացիայի պակաս
- Օրենսդության տեղեկատվության պակաս
- Համապատասխան ֆինանսական միջոցների պակաս
- Նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայի ուսուցման բովանդակությանը ոչ համապատասխան լինելը
- Մանկավարժների բացասական վերաբերմունքը դպրոցի ընդհանուր գործունեությանը
- Ֆորսմաժորային իրավիճակ

Ռիսկերի ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Պետական պարտադիր ատեստավորման վերապատրաստումներից բացի Դպրոցի նախաձեռնությամբ նաև մասնագիտական, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ուսուցման գործընթացի օրենսդրության իմացության սեմինարների, քննարկումների և վերապատրաստումների իրականացում:

Ինքնակրթության և ինքնազարգացման համապատասխան միջավայրի և գործիքների տրամադրում և մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառում (պարգևատրումներ,խրախուսումներ,պատվոգրեր և այլն):

Մանկավարժների բազմակարծության, նրանց՝ դպրոցի ընդհանուր գործունեության որոշումների կայացման, կազմակերպման և իրականացման գործում մասնակցային դրսևորումների և դիրքորոշումների ապահովում և խրախուսում

Նյութատեխնիկական բազայի ուսուցման բովանդակությանը համապատասխանեցնելու գործողությունները ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով կազմակերպում

Ֆինանսական միջոցների պակասի լրացում՝այն կազմակերպելով ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացմամբ:

Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

* Դպրոցում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքների, արտակարգ ընդունակություններ, ցածր առաջադիմություն ունեցողների, հարակրթությունից դուրս մնացածների, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ սովորողների համար նախասիրություններին համապատասխան կազմակերպել, իրականացնել լրացուցիչ հանրակրթական ծրագրեր, արտադասարանական խմբակներ և անհատական պարապմունքներ, որոնք կնպաստեն ուսման որակի բարձրացմանը:

* Ապահովել սովորողների ինքնավարությունը, ազատ խոսքը, ինքնազարգացումը և անվտանգությունը:

Ռիսկերը

- ✓ Ուսուցիչների, ծնողների և սովորողների՝ ներառականության նկատմամբ ունեցած կարծրատիպերի առկայություն
- ✓ Դպրոցի ընդհանուր գործունեությանը սովորողների ձևական մասնակցություն
- ✓ Գործընթացի կազմակերպման դժվարություններ՝ կապված ծրագրային բովանդակության և ուսուցիչների մասնագիտական փորձի բացակայության հետ
- ✓ Սովորողների ուժեղ կողմերի և հակումների ոչ լիարժեք բացահայտում
- ✓ Լրացուցիչ պարապմունքների ոչ արդյունավետ իրականացում
- ✓ Արտադասարանական խմբակներին մասնակցելու ցանկության պակաս
- ✓ Սովորողների կողմից ինքնուրույն, ցածր առաջադիմության շեմը հաղթահարելու կարողունակությունների պակաս
- ✓ Սովորողների կողմից իրենց ընդունակությունների և կարողունակությունների համապատասխան մասնագիտական կողմնորոշման դժվարացում
- ✓ Սովորողների կողմից իրենց առանձնահատկություններին համապատասխան ոչ ազատ սոցիալականացում, ինքնադրսևորում
- ✓ Ինքնակրթության, ինքնազարգացման պասիվություն
- ✓ Ֆորսմաժորային իրավիճակ:

Ռիսկերի ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Ուսուցիչների, ծնողների և սովորողների հետ բացատրական աշխատանքների իրականացում, նրանց և ԿԱՊԿՈՒ սովորողների համատեղ մասնակցության ապահովում ուսումնառության և միջոցառումների կազմակերպման աշխատանքներում

Թիմային, մասնակցային աշխատանքի կազմակերպում, ըստ անհրաժեշտության՝ համապատասխան փորձագետների ներգրավում, թեմատիկ վերապատրաստումներին մասնակցություն

Սովորողների մասնագիտական կողմնորոշման համար համագործակցության շարունակականության ապահովում և ընդլայնում ԴԶԾ-ում նշված ուսումնական հաստատությունների հետ

Առարկայական ենթակառուցվածքների բարելավում ժամանակակից տեխնոլոգիաներով, ուսումնական նյութերով, պարագաներով: (Դրանք ձեռք կբերվեն ԴԶԾ-ում նշված տարբեր ծրագրերի իրականացման, բարեգործների օգնության, նպատակային ներդրումների ինչպես նաև՝մանկավարժների,ծնողների,սովորողների կողմից մշակած /բանջարաբոստանային,մրգատու այգիներ/ և բերքից ստացված եկամուտներից)

Ինքնակրթության, ինքնազարգացման համար գրադարան-ընթերցասրահը ձեռք բերված ժամանակակից տեխնոլոգիաներով վերազինում: Աշակերտական խորհրդի գործունեության և ինքնավարության ապահովում:

Յուրաքանչյուր սովորողի ազատ խոսքի, սոցիալականացման, ինքնադրսևորման, հասարակության լիարժեք անդամ լինելու ապահովում և իրականացում՝ ընդգրկելով նրանց իրականացվող ծրագրերում, արտադասարանական խմբակներում, արտադասարանական աշխատանքներում լրացուցիչ պարապմունքներ

Առարկայական ուսուցիչների միջոցով ցածր առաջադիմություն, արտակարգ ընդունակություն ունեցողների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացածների համար լրացուցիչ պարապունքների կազմակերպում և իրականացում: Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

* Արտադասարանական և արտադպրոցական համագործակցության խթանում, ընդլայնում:

* Աշակերտական, մանկավարժական համակազմի, կառավարման և խորհրդակցական խորհուրդների, համայնքի, կրթության կառավարման լիազորված և շահառու մարմինների, բարեգործների հետ համագործակցության խթանում, ընդլայնում:

Ռիսկերը

- ✓ Պասիվություն՝ ծանրաբեռնված աշխատանքի կամ այլ պատճառներով
- ✓ Ոչ արդյունավետ համագործակցություն
- ✓ Շահագրգիռ կողմերի չներկայանալը որպես կարևոր դերակատարում ունեցող կողմեր
- ✓ Ժամանակավրեպ որոշումների, գործողությունների իրականացում
- ✓ Վստահության պակաս
- ✓ Ոչ պետական մտածելակերպ և անտարբերություն
- ✓ ՄԽ ,ԾԽ, ԱԽ, ԿԽ կառավարման և խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության պասիվություն
- ✓ Ֆորսմաժորային իրավիճակ:

Ռիսկերի ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Դպրոց-համայնք՝ որպես մեկ ամբողջական հասարակությունում ժողովրդավարության ապահովում և ամրապնդում

Համագործակցության շրջանակներում մասնակցային որոշումների կայացման և հանդուրժողականության բազմակարծության հետևողականության ապահովում

Կատարված ֆինասական և նյութական ներդրումների, բարեգործությունների հանրայնացում և հաշվետվողունակության թափանցիկության ապահովում

Համագործակցության արդյունքում կայացված որոշումների և տարբեր ծրագրերի ժամանակին իրականացում

Աշխատանքների կազմակերպումը կողմերին հարմար ժամերին, օգտվել հեռավար կապի միջոցներից

Արդյունավետ համագործության համար տվյալ ժամանակի առաջնահերթ խնդիրների ներկայացում

Պետության հիմքերից է դպրոցը. ամրագրել այն՝ որպես համագործակցության գլխավոր գաղափար

Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

* Դպրոցի գործընթացի կառավարման, վարչարարության, գործավարական գործիքների ապահովում:
* Օրենքով սահմանված նորմատիվ, ներքին իրավական ակտերի վարման, կիրառման թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում:

Ռիսկերը

- ✓ Գործող փաստաթղթաշրջանառության և գործավարության մեջ հնարավոր թերությունների և խախտումների առկայություն
- ✓ Պարբերաբար փոփոխվող իրավական ակտերը,կարգերը
- ✓ Աշխատակիցների ոչ բավարար տեղեկացվածությունը Օրենսդրության իմացության և դրանց կիրառության մասին
- ✓ Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառության իմացության պակաս
- ✓ Ֆորսմաժորային իրավիճակ

Ռիսկերի ազդեցության մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Իրավական ակտերի համապատասխանեցում ՀՀ օրենսդրության պահանջներին

Ուսուցիչներին կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտերում կատարված փոփոխությունների նախագծերի քննարկմանը և առաջարկություններ կատարելուն մասնակից դարձնելու ապահովում

Իրավական ակտերի (անհատական, ներքին) վարման, հրապարակման, պահպանման և արխիվացման գործառույթների կանոնակարգում

Կառավարման խորհրդին և խորհրդակցական մարմիններին օրենսդրության իմացության և կիրառության իրազեկում և աջակցում

Փաստաթղթերի կազմման, վարման համար ժամանակակից տեխնոլոգիաների կիրառության ապահովում

Ֆորսմաժորային իրավիճակի դեպքում դպրոցում գործընթացների կազմակերպում ըստ պահանջի՝ նորմատիվներին համապատասխան:

## Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաները և մարդկային, բյուջետային, տեխնոլոգիական ռեսուրսները

Արդի ժամանակաշրջանին համապատասխան ՀՊՉ-ի պահանջները և հանրակրթության բովանդակության բարեփոխումները նպատակաուղղված են ի շահ սովորողին, ինչպես նաև սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: ՀՊՉ-ի պահանջների և հանրակրթության բովանդակության իրականացման որակը կապահովի նաև ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը և հնի վերափոխումը նորով: Մշակված ԴԶԾ-ն կառուցողական է և իրատեսական՝ մեկ ամբողջություն, դպրոցի առջև դրված նպատակները և դրանցից բխող խնդիրները լուծելու համար:

Ներկայացված ԴԶԾ-ի նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված՝ յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող միջոցները, նյութատեխնիկական պարագաները և տեխնոլոգիաները կիրառվել և կկիրառվեն նպատակային՝ ըստ խնդրի առաջնահերթության: Ներկայացվածի կարևորությունը ոչ միայն կիրառությունն է, այլ նաև պահպանումն է:

ԴԶԾ-ի նպատակների և խնդիրների լուծման համար անհրաժեշտ են նաև մարդկային և բյուջետային ռեսուրսներ, որոնք նույնպես ապահովում են ԴԶԾ-ում ամրագրված յուրաքանչյուր գործողության իրականացումը և արդյունավետ արդյունքները: Դպրոցում առկա միջոցները, նյութատեխնիկական պարագաները և մարդկային, բյուջետային, տեխնոլոգիական ռեսուրսների 50 տոկոսից ավելին ներկայացված են ԴԶԾ-ի որպես ՈՒԺԵՂ ԿՈՂՄ, որն էլ նախորդ 5 տարիների աշխատանքների արդյունքն է: ԴԶԾ-ի հիմքով հաջորդ 5 տարիների՝ դպրոցի ընդհանուր գործունեությունը կազմակերպվելու է որպես ՈՒԺԵՂ ԿՈՂՄ ամբողջ ներկայացվածը շարունակական կիրառելու և զարգացնելու, ինչպես նաև որպես ԹՈՒՅԼ ԿՈՂՄ՝ ամբողջ ներկայացվածը ձեռք բերելու և զարգացնելու ԴԶԾ-ում սահմանված գործողությունների միջոցով՝ պահպանելով պահանջները, կատարման ժամկետները, ֆինասական միջոցների արդյունավետ կառավարումը և ձեռք բերման անհրաժեշտությունը: Նախատեսվում է նաև , որ հաջորդ տարիների ընթացքում ԴԶԾ-ում կարող են կատարվել փոփոխություններ վերը նշված ռեսուրսների առկայության և գործունեության ընթացքում հաշվետվությունների վերլուծությունների արդյունքում բազմակարծության և մասնակցային որոշումների հիման վրա, ինչպես նաև ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան:
ԴԶԾ-ի գերխնդիրն է ուսման որակի բարձրացումը, որի արդյունավետ արդյունքը կստացվի՝



## Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմ

ՀՀ կառավարության 02.02.2023 թվականի որոշման՝ ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության համաձայն՝ դպրոցի խորհուրդը աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի հաշվետվությունը և տալիս եզրակացություն:

Ըստ վերը նշվածի՝ ԴԶԾ-ի կատարման վերահսկողությունը իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը և քանի որ ԴԶԾ-ի նպատակները, ծագող խնդիրները իրենց լուծումները ստանում են Դպրոցի ընդհանուր գործունեության արդյունքում, ուստի վճռորոշ դեր ու նշանակություն ունի դպրոցում ըստ ոլորտների հսկողությունն և վերահսկողությունը: Վերահսկողության ճիշտ մեխանիզմ ներդնելու դեպքում այն կխթանի ԴԶԾ-ի արդյունավետ իրականացմանը:

Դպրոցում վերահսկողությունը դիտարկման, հաշվառման, ստուգման և դրանց արդյունքների վերլուծության ամբողջությունն է: Այն ուսումնադաստիարակչական, կառավարման, վարչատնտեսական աշխատանքներին զուգահեռ շարունակական գործընթաց է:

Ժամանակակից հանրակրթական դպրոցին առաջադրված խնդիրների լուծման համար ԴԶԾ-ում նշված բոլոր ոլորտներում իրականացվող գործողությունների անհրաժեշտ վերահսկողությունը պետք է լինի՝

բազմանպատակ---այսինքն՝ ուղղված է տարբեր հարցերի ստուգմանը (ուսումնադաստիարակչական, մեթոդական, փորձարարական գործունեություն, դպրոցի ուսումնանյութական բազայի կատարելագործում, սանիտարահիգիենիկ պահանջների կատարում, անվտանգության տեխնիկայի պահպանում և այլն),

բազմակողմանի--- նշանակում է բոլոր ոլորտներում միևնույն գործողության նկատմամբ վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում, օրինակ ուսումնադաստիարակչական ոլորտում միևնույն առարկայի նկատմամբ վերահսկողություն (ֆրոնտալ, թեմատիկ, ուսուցչի գործունեության անհատական վերահսկողություն և այլն)

բազմաստիճան--- բոլոր ոլորտներում միևնույն գործողության նկատմամբ վերահսկողությունը վարչական մարմինների տարբեր մակարդակներով, օրինակ՝ ուսուցչի աշխատանքը կրթական գործընթացում վերահսկում են տնօրենը, փոխտնօրենները, մեթոդական միավորումների նախագահները:

Վերահսկողության արդյունավետ իրականացման կարևորությունը դա տեսակն է, որը որոշակի նպատակով իրականացվող վերահսկողության ձևերի համակցումն է: Վերահսկողության ձևերի առանձնահատկությունները բնորոշվում են առաջադրված

խնդիրների յուրահատկություններով, ինչպես նաև վերահսկողության համար օգտագործվող միջոցներով: Ելնելով ԴՋԾ-ի իրականացման նպատակներից՝ուսումնադաստիարակչական ոլորտում կառանձնացվի վերահսկողության երկու տեսակ՝ թեմատիկ և ֆրոնտալ:

Թեմատիկ վերահսկողությունը իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում ուսումնասիրվող առարկայի վիճակի մասին տեղեկություն ստանալու նպատակով (սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների աստիճանը, ուսուցչի, դասղեկի աշխատանքի որակը, ՄՄ աշխատանքի բովանդակության համապատասխանությունը ներկայացված թեմային, խմբակների աշխատանքի որակը, անհատական պարապմունքների անցկացումը, դասերին անվտանգության տեխնիկայի պահպանումը և այլն): Թեմատիկ վերահսկողության արդյունքներով կձևակերպվի տեղեկանք, կանցկացվեն հարցազրույցներ, խորհրդակցություններ:

Ֆրոնտալ վերահսկողությունը իրականացվում է տարին 2-3 անգամ՝ ուսումնասիրվող առարկան ամբողջությամբ (մեթոդական աշխատանք, ուսումնադաստիարակչական աշխատանք, արտադասարանական դաստիարակչական աշխատանք, փորձարարական աշխատանք և այլն) կամ դպրոցի առանձին ենթաբաժինները (զուգահեռ դասարաններ, ՄՄ, ծառայություններ) միաժամանակ և համակողմանի ստուգելու նպատակով:

Վերահսկողության մյուս կարևոր հանգամանքը ձնն է, որը վերահսկողության կազմակերպման եղանակն է: Ըստ անցկացման ժամանակացույցի վերահսկողությունը կլինի՝

Մուտքային---կիրականացվի ուսումնական տարվա սկզբին-- սեպտեմբերի մինչև 10-ը

Ընթացիկ-- տարվա ընթացքում—ըստ անհրաժեշտության

Միջանկյալ—առաջին և երկրորդ կիսամյակների ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում

Ամփոփիչ--կիրականացվի ուսումնական տարվա ավարտին՝ մինչև օգոստոսի 25- ը:

Հաջորդը դա վերահսկողության մեթոդն է, որն էլ առաջադրված նպատակին հասնելու համար վերահսկողության գործնական իրականացման եղանակն է: ԴՋԾ-ում բոլոր ոլորտների գործունեության վիճակի ուսումնասիրման համար նախատեսվում է վերահսկողության առավել արդյունավետ մեթոդներ.

Դիտարկում (ուշադիր հետևելով ինչ-որ բանի՝ ուսումնասիրել, հետազոտել), Վերլուծություն (պատճառների բացահայտում, զարգացման միտումների սահմանում), Զրույց (որևէ թեմայով գործնական խոսակցություն՝մտքերի փոխանակմանը ունկնդիրների մասնակցությամբ),

Փաստաթղթերի ուսումնասիրում (մանրազնին ուսումնասիրում՝ ծանոթանալու, ինչ-որ բան պարզաբանելու նպատակով),

Տեղեկագրում (հարցման միջոցով հետազոտման եղանակ),

Ժամանակաչափում (կրկնվող գործողությունների կատարման համար ծախսված աշխատանքային ժամանակի չափումը):

Մինչև Կառավարման խորհրդին դպրոցի զարգացման ծրագրի կատարողականության հաշվետվությունների ներկայացնելը, ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են վերահսկողություններ՝

Ուսումնական ոլորտում - կիրականացնեն տնօրենի տեղակալը, ՀԿԱԴԱ-ն, մեթոդական միավորումների նախագահները - գրավոր աշխատանքների հանձնարարում, բանավոր հացրումների կազմակերպում, թեմատիկ պլանների ստուգում, էլեկտրոնային մատյանների ստուգում, մեթոդմիավորումների կատարողականոթյան ստուգում, դասավանդող ուսուցիչների առարկայական թեմաների կատարողականության ստուգում, գործնական աշխատանքների ստուգում, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ցույց տվող մասնագետների աշխատանքների ստուգում , ինչպես նաև դասղեկների կատարած աշխատանքները և ներկայացնում հաշվետվություններ: Հաշվետվությունների արդյունքը ամփոփվում է, համեմատվում է ներքին գնահատման հետ, որից հետո ներկայացվում է հաշվետվություն կառավարման խորհրդին:
Հաշվետվությունների արդյունքում կարձանագրվեն ձեռք բերումները, կքննարկվեն բացթողումները և կկայացվեն համապատասխան որոշումներ:
Տնտեսական ոլորտում - կիրականացնի համակարգողը:

# ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԴԶԾ - Դպրոցի զարգացման ծրագիր

ՏՏՀՈՒՀ – Տնօրենի տեղակալ՝ հանրակրթական ուսումնական հաստատության

ՀԿԱԴԱ – Համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների

ՈՒՕ - Ուսուցչի օգնական

ԷԿԴԱՄ – Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ

ԿԽ - Կառավարման խորհուրդ

ՄԽ - Մանկավարժական խորհուրդ

ՄՄ - Մեթոդական միավորում

ԾԽ - Ծնողական խորհուրդ

ԱԽ - Աշակերտական խորհուրդ



ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԻ





## ՃԱՇԱՐԱՆ








# ՃԱՇԱՐԱՆ







## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԲԻՆԵՏ





Դպրոցի շրջանավարտ, Արցախյան պատերազմի հերոս
Գուրգեն Այվազանի անունը կրող ՌԱԶՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏ





# ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ









## ՄԵՐ ԱՌՕՐՅԱՆ









## ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԹԻՄԵՐԸ





## ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ












# ՓԱՍՏԱԹՂԹԵՐ


SHTYGEN







World Vision

Հավելված 1 [illegible]
WVA/Gegharkunik/Gavar ADP/DON Number 015_Youth/FY19_PROJ Number A204451
[illegible]

Annex 1
To the Donation Agreement N
WVA/Gegharkunik/Gavar ADP/DON Number 015_Youth/FY19_PROJ Number A204451
Signed on ________

[illegible]
LIST OF THE DONATED PROPERTY

| h/h NN | [illegible] / Description of the donated property | [illegible] / Quantity | | [illegible] price | [illegible] / total |
|---|---|---|---|---|---|
| 1. | [illegible] HP 15.6 i3 6006U 4 GB/ 500 GB S/N CND811SP9G | 1 | [illegible] / unit | 277440 | 277440 |
| | | | | [illegible] / total | 277440 |

ԳԱՀ / WVA:

[illegible] / Delivered by:
[illegible] / Gavar AP Youth officer

[illegible] / Grigor Dashtoyan ________ 05/06/2019
[illegible] / Full name [illegible] / Signature [illegible] / Date

[illegible] / Beneficiary:
[illegible] / Accepted by:
[illegible] / Gavar [illegible]

[illegible] / Anush Barseghyan ________ 05/06/2019
[illegible] / Full name [illegible] / Signature [illegible] / Date

[illegible] / Approved by:
Marz Development Manager / [illegible]

[illegible] / Vonadie Sargsyan ________ 18/06/2019
[illegible] / Full name [illegible] / Signature [illegible] / Date

[illegible stamp]

ԱԿՏ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

[illegible]

[illegible]

[illegible] 01.10.2021թ. [illegible] 01.10.2021թ.-ին [illegible]

1. [illegible] 100 [illegible] 9 600 [illegible] 16 [illegible] 58 000 [illegible] 1 888 000 [illegible]

2. [illegible]

[illegible]
[illegible]
[illegible] 2
ՀՎՀՀ 02657878
[illegible]

[illegible]
[illegible] N 2 [illegible]
[illegible]
ՀՎՀՀ 08406376
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

§ 1 [illegible]

(1) [illegible] 840000 [illegible]

(2) [illegible]

(3) [illegible]

§ 2 [illegible]

(1) [illegible]

(2) [illegible] § 52 [illegible] § 53 [illegible] § 54 [illegible] § 51 [illegible]

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԾԹՀ 21/09

[illegible]

[illegible]

1. [illegible]

[illegible]

2. [illegible]

[illegible]

3. [illegible]

[illegible]

[illegible]

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ.....2
- 2018-2023 ուսումնական տարիների ընթացքում կատարված աշխատանքների միջոցով գրանցած առաջընթացը.....5
- Դպրոցի զարգացման ծրագրի դիրքորոշումը և տեսլականը.....8
- Դպրոցի գործունեության Առարկան Նպատակը Նպատակներից բխող խնդիրները.....9
- Սովորողների կրթական կարիքները.....10
- Պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան.....11
- Դպրոցի ենթակառուցվածքների համապատասխանությունը սովորողների կրթական կարիքների ապահովման, ուսումնական գործընթացի կազմակերպման, մարդկային ռեսուրսներին և ներուժին.....13
- Իրավիճակի վերլուծությունը.ուժեղ և թույլ կողմերը. Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը.....16
- Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը.....19
- Հաստատության տնօրենի և կառավարմանմարմնի համագործակցության վերլուծությունը.....20
- Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.....24
- Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.....25
- Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը.....31
- Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն, ուսումնական գործընթաց, դաստիարակչական գործընթաց.....32
- Բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային համակարգի վերլուծություն.....41
- Աշխատակազմի արժեվորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն.....44
- Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը դրանց արդյունավետության ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից.....46

- Խորհրդակցական մարմիններ.
  մանկավարժական խորհուրդ, մեթոդական միավորումներ,
  ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ.............................................................49
- Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները, ժամանակացույցները, պատասխանատուները.............................................................................................. 59
- Դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները ...........................................................................................................67
- Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը, մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները.................................................................................. 90
- Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաները և մարդկային, բյուջետային, տեխնոլոգիական ռեսուրսները ...........................................................................................98
- Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմ ............................................................................................................................ 99
- Դպրոցի զարգացման ծրագրում օգտագործված հապավումներ.................................102
- Փաստաթղթեր և լուսանկարներ........................................................................................ 103
- Բովանդակություն .............................................................................................................115